№ 222 ՇԱԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1914
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ 4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 222

Տարեկան գինը 10 բուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 բուբլի. ամսական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—3 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարություն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Соломоновская ул., № 21.
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի ՑԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 3 ՐՈՒԲ.
Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և 40 կ. նամակագրոշմ։ Հին ՀԱՍՑԷՆ և 40 կ. շուղարկողների բնդ-դիմները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԻԱՆՔ։
Յայտարարությունների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, հոկտեմբերի 6-ին
ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿ. ԽՈՒՄԲԸ
Կը ներկայացնէ
ՀԱՅՐԵՆԻՔ
Դրամա 6 արարուածով, Սարդուի, թարգմ. Նէլեանի
ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԵՆ.—տ. տ. Մայսուրեան, Մանուչարեան, Մարի, Յասմիկ, Յովհաննիսեան, Ղարախանեան, Սեւումեան, պ. պ. ԱԲԻԼԵԱՆ, Ալիխանեան Իս., Ալլահվերդեան, Աւետեան, Բերոյեան, Խորէն, Մամիկոնեան, Միրզոյեան, Մուրադեան, Տէր-Առաքելեան, Սաֆարեան, Սեւումեան և ուրիշներ։
Սկիզբը երեկոյեան ժամը ճիշդ 8-ին է։ —◆— Տեղերի գները սովորական են։
Ռէժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ
Վարչութեան հերթապահ անդամները՝ Ա. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ, Ե. ՁՄՇԿԵԱՆ
տա. 917. 2—1

ՊԱՍՏԱՌՆԵՐ
ԵՂԲ. ՏԱՐՆՕՊՕԼ
ՓԱԲՐԻԿԱՅԻ
Շրջանացած մեծ պարգևի։ Վաճառվում են ՌՈՒՍԱՑ ՊԵՏՈՒԹԵԱՆ բոլոր յայտնի քաղաքներում։
Փաբրիկային իսկական գներով։
Պահեստում միշտ կարելի է ձեռք բերել մեծ քանակութեամբ բազմատեսակ պաստառներ վերջին տիպի, ինչպէս էմանագիններ, նոյնպէս և թանգարժէքներ։ Բացառապէս լրիւ չափսն է 11¼ արշ. երկար.։
Սէլօճային նմուշները ուղարկվում են 2 Ր-ի և օտար քաղաքներում։
Բաժանմունքը Թիֆլիսում.
Обои фабрики Бр. Тарнополь. Отдѣленіе въ Тифлисѣ. Голов. пр., № 21. Тел. № 3—55.
(հ. շ.) տա. 309. 50—49

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԷՕՆՋԵԱՆ
վերադառնալով վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը. պլօմբ, արհեստական ատամներ, ատամի հեռացումը առանց ցաւի։
Ընդունելութիւնը ամենայն օր.
Առաւ. 9—2 ժ.
Երեկ. 4—7 ժ.
Կիրակի օրերը 10—12.
Ակրմանովսկայա փողոց № 1. մուտքը Նրբափողոցից։
տա. (ա. օ.) 0—29 804.

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻԻԼԵԱՆ
վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը՝ տա. ժամը 9—2 և երեկ. ժ. 5—7։
Վելիամինովսկայա փող. № 4.
(ա. օ.) տա. 871. 0—15

ԻՆՉ ՊԷՏՔ Է ԽՆԴՐԵՆՔ
II

Մենք ասացինք, որ ներկայ համաեւրոպական պատերազմը երբ աւարտվի դաշնակից պետութիւնների՝ Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի յաղթութեամբ և Գերմանիայի ու Աւստրիայի պարտութեամբ, ի թիւս անլուծելի մնացած շատ հարցերի՝ պէտք է քննութեան առնվի և լուծվի նաև հայկական հարցը։

Ասացինք նաև, որ հայկական հարցի լուծումը երկու տեսակ կարող է լինել. կամ այն է, որ Ռուսաստանը կը գրաւի Թիւրքաց Հայաստանը ու կը կցէ իր երկիրներին, և կամ այն է, որ եւրոպական պետութիւնների կօնֆերէնցիան ինքը կը կարգաւորէ և կը լուծէ հարցը, տալով Թիւրքաց Հայաստանին այս կամ այն կառավարչական ձեւը։ Ահա այդ վերջին դէպքում հարց է ծագում, թէ կառավարութեան որ ձեւը, եղանակը աւելի ցանկալի կը լինի հայերի համար. և եթէ հարկ լինի կօնգրէսի առաջ պաշտպանել Հայաստանի ազատագրութեան հարցը, ինչ պէտք է խնդրենք մենք հայերս։

Խնդիրը շատ ծանրակշիռ է և փափուկ ու շատ դժուար լուծելի։ Բաւական չէ ասել, թէ մենք հայերս կը ցանկայինք, որ Թիւրքաց Հայաստանին տային աւտոնոմիա, կամ նրանից ըստեղծէին մի նոր իշխանապետութիւն, կամ թողնելով թիւրքական իշխանութեան ներքոյ՝ մտցնէին լայն ռեֆորմներ և այլն։ Պէտք է ամենից առաջ խորապէս և լրջօրէն քննել, թէ արդեօք որքա՞ն օգտակար կը լինի հայերի համար աւտոնոմիան, երբ նրանք չեն կազմում բացարձակ մեծամասնութիւն երկրում, այլ մեծամասնութիւնը կազմում են մուսուլման տարրերը։ Կամ գուցէ աւելի ձեռնտու և նպատակայարմար կը լինի համաձայնութիւն և համերաշխութիւն հաստատել միւս տարրերի հետ և կազմել մի տեսակ ֆեդերատիվ իշխանութիւն, կամ գուցէ բաւական կը լինի ստեղծել Լիբանանի նման մի տեղական ինքնավարութիւն, կամ գուցէ հայկական հարցի միակ հնարաւոր լուծումն է ռուսական գրաւումը և այլն։

Կրկնում ենք, ինչպէս տեսնում էք, շատ ծանրակշիռ հարցեր են հրապարակ գալիս կամ դրված են արդէն և նրանց լուծումը շատ դժուար է ու պատասխանատու։

Ամենից առաջ, երբ խնդիրը վերաբերում է որևէ մի ժողովրդի կամ ազգի բաղդի տնօրէնութեան, պէտք է իմանալ այդ ժողովրդի և տարրի ցանկութիւնը և պահանջը։ Ուրեմն ամենից առաջ մենք պէտք է իմանանք իրանց Թիւրքահայերի կամքը և ցանկութիւնը։ Այդ մենք չը գիտենք, դժբաղդաբար. ճիշդ է, եթէ հաւատանք Թիւրքահայ մտաւորականների կամ «դաշնակցական» գործիչների հաւաստիացումներին 1908 թ. պետ. յեղաշրջումից յետոյ, Թիւրքահայերը ցանկանում են մնալ օսմանեան իշխանութեան ներքոյ. բայց չէ՞ որ այդ հաւաստիացումները անվում էին, երբ մարդիկ հաւատում էին, թէ Թիւրքիան կարող է դառնալ սահմանադրական և պարլամենտական պետութիւն. վերջապէս, Թիւրքահայ մտաւորականի կեղծ տիպը մեզ շատ հանրածանօթ է, որպէսզի կարելի լինէր անկեղծութեան շեշտ տեսնել նրանց հաւաստիացումների մէջ. նոյնիսկ Ադանայի սոսկալի կոտորածից յետոյ, Թիւրքահայ օրոշ մտաւորականները չէին քաշվում սեղմել հայ կանանց և մանուկներին խողխողող դահիճների ձեռքը և նրանց «թէմէննա» անել։ Հետևաբար, այդպիսի «ներկայացուցիչների» ձայնը չէ կարող համարվել ժողովրդի ձայն և պահանջ։

Ուստի պէտք է ընդունել, որ մենք բնաւ ծանօթ չենք Թիւրքահայ ժողովրդի իղձերի և ցանկութիւնների հետ և մեզ թոյլ չը պէտք է տանք խօսել նրանց անունից, չենթարկելու համար նրանց նորանոր աղէտների։ Եւ եթէ, դժբաղդաբար, վերջերս մի քանի արկածախնդիրներ թոյլ են տուել իրանց հանդէս գալ մեր մէջ իբրև Թիւրքահայութեան ներկայացուցիչներ, նրանք լոկ ինքնակոչներ են, որոնց Թիւրքահայը ոչ մի լիազորութիւն և միսսիա չէ յանձնել խօսելու իր մասին և, անտարակոյս, նրանք ապագայում կենթարկվեն սահագին պատասխանատուութեան և կը մատնվեն անարգանքի սիւնին պատմութեան մէջ։

Պէտք է քաջ ըմբռնել և իմանալ, որ մեր ռուսահայերի ամեն մի քայլը, ամեն մի գործողութիւնը յօգուտ Թիւրքահայերի կարող է խիստ աղէտալի լինել նրանց մէջ, առաջ բերելով նոր կոտորածների, ջարդերի, արհաւիրքների վտանգ։ Ուրեմն, մենք ռուսահայերս պէտք է գործենք այդ հարցում ամենազգուշաւոր կերպով և ոչ յախուռն, ոչ բոպէի տրամադրութեան ներքոյ։

Մենք ռուսահայերս գիտենք միայն մեր անելիքը. մենք շատ լաւ համոզված ենք, որ մեր Թիւրքահայ եղբայրների դատը պաշտպանված և լուծված կը լինի, երբ ներկայ համաեւրոպական պատերազմի մէջ ռուսական զէնքը յաղթող հանդիսանայ, ուստի և մենք ամեն կերպ պէտք է աջակցենք այդ յաղթանակին։

Գալով Թիւրքահայաստանի ապագայի հարցին, քանի որ այդ հարցն ունի շատ ճիւղաւորումներ, քանի որ առաջարկվում են զանազան ծրագիրներ, քանի որ մեզ անյայտ է. իրա Թիւրքահայի իսկական իղձը և պահանջը, մենք ռուսահայերս, որպէս զի գործած չը լինենք յախուռն այդ հարցի մէջ, որպէս զի մեր անտեղի միջամտութեամբ, մեր սխալ քայլերով նոր աղէտների դուռն չը բանանք մեր եղբայրակիցների համար, պէտք է ընդգծենք մի որոշ քաղաքականութիւն, հիմնված ըէալ, իրական տուեալների և ներկայ քաղաքական դրութեան վրա. իսկ այդպիսի մի ծրագիր մշակելու, քննելու և գործադրելու իրաւունքը պատկանում է միայն համազգային ժողովին, ընդ նախագահութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի։ Եւ հէնց այդ է պատճառը, որ այժմ աւելի և աւելի ընդհանրանում է հայկական խաւերի մէջ և լրջամիտ շրջաններում ազգային համագումարի գաղափարը, որովհետև միայն ազգային համագումարը կարող է վերջ դնել զանազան խմբակցութիւնների, բիւրօների, կուսակցութիւնների անջատ և ինքնակոչ ջանքերին ու աշխատութիւններին և ստեղծել համերաշխ և միաբան դործակցութիւն։

Հ. Առաքելեան

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
3 հոկտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից. «Արևելա-պրուսական, Մէջին Վիսլայի և Սանի զօրաճակատներում դրութիւնը անփոփոխ է։ Պերեմիշլից դէպի հարաւ կռիւ է։ Մեր զօրամասերից մինը, ջարդելով աւստրիացիներին, գերեց 7 օֆիցերի և 500 զինուորի և ձեռք ձգեց գնդակացիրները»։

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՕ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
2—3 հոկտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Անգլիական մամուլի բիւրօն յայտնում է, որ բրիտանական զօրքերը կռիւ ունեցան թշնամու դէմ դաշնակից զօրքերի ձախ զօրաթևի ուղղութեամբ։ Հետևանքում գերմանացիք մի փոքր ետ քաշվեցին։ Տեղի պայմանները, ուր կռիւը եղաւ, թոյլ չեն տալիս արագօրէն առաջանալ։

ՊԱՐԻԶ.—Պաշտօնական հաղորդագրութիւն. «Ձախ զօրաթևում թշնամին հեռացաւ Լիս գետի ձախ ափից, Լիս գետի և Ջրանցքի միջև։ Լա-Բասսէում դրութիւնն անփոփոխ է։ Մենք բաւականին առաջացել ենք Լանսի շրջանում, Արրասի և Ալբերի միջև։ Սոմմի և Ուազի միջև դրութիւնը նոյնն է։ Գերմանացիք կրակ բացին մեր ռազմագծի դէմ, բայց հետևանն գնդերով յարձակում չը գործեցին։ Կենտրոնում՝ Ուազի և Մասսի միջև մենք առաջ ենք գնացել դէպի Կրաոնու և հիւսիս արևելք՝ դէպի Բէրրի-օ-Բակ։ Բէյմսի մօտ և Գրիսնէի հիւսիսում, Բէնուի ուղղութեամբ, մենք գրաւեցինք թշնամու մի քանի դիրք։ Մասսի և Մովէլի միջև մենք վանեցինք գերմանացիների յարձակումները, որոնք ուղղված էին Վերդէնից հարաւ-արևելեան մասում լոյս հոկտ. 1-ի գիշերը։ Հոկտեմբերի 1-ին մենք առաջացանք դէպի Մէց։ Աջ զօրաթևում գերմանացիք այլևս չեն յարձակվում Բէն-դէ-Սաժէում, Սէնիէից դէպի հիւսիս։ Գերմանայն զօրքերը, որոնք գալիս էին Բէլգիայից և մանաւորապէս Անավերպէնից արևմտեան ուղղութեամբ, ներկայումս բանակել են Բրիւգգէ և Տիէլտա շրջանում»։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.— «Թայմսին» հեռագրում են Կալէից, որ երկուշաբթի օրը գերմանական աէրոպլանից ռումբեր նետվեցին Ֆնտոմէրի վրա, որից սպանվեցին երկու հոգի և վիրաւորվեցին 6 հոգի։

Շալոնից հաղորդում են, որ գերմանական արտիլէրիան շարունակում է աւերել Ռէյմսի տաճարը։

ԲՕՐԴՕ.—«Օմ-Անշէնէն» գրում է. «Բազմաթիւ գերմանական զօրքեր, որոնք գտնվում էին Բէլգիայում, երկու հոսանքով դիմում են դէպի ֆրանսիական սահմանը և Օստենդէ, որտեղից փորձելու են իջնել մինչև Դիւնկերկ. բայց առաջ քան գերմանացիք կը հասնեն իրանց նպատակին, նրանք կը վանվեն։ Արրասից դէպի արևմուտք ընկած ռազմագիծը ամեն օր ամրացվում է։ Շուտով այդ ռազմագծում զօրքերը կարող կը լինեն ուժգին յարձակման դիմել դէպի թշնամին։ Մեր ձախ զօրաթևը հիմք չունի վախենալու Բէլգիայի կողմից արշաւող գերման զօրքերից, որովհետև նա թեւով գերազանցում է Ֆոն-Կլուքի զօրքի աջ զօրաթևից։ Մեր աջ զօրաթևում պատերազմական գործողութիւնների նպատակն է՝ ազատել Վերդէնը։ Այդ գործողութիւնները տարվում են աջողութեամբ»։

ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
3 հոկտեմբերի

ՆԻՇ.—«Պրէսս-Բիւրօն» հաղորդում է, որ լոյս սեպտ. 20-ի գիշերը Բօսնիայում սերբերը ընդհարում ունեցան թշնամու դէմ իրանց ձախ զօրաթևում, որ վերջացաւ պատուաւոր վերջով սերբերի համար։

Սեպտ. 29-ից Զվօրնիկ-Լօզնիցա զօրաճակատում թշնամին սկսեց ուժեղ թնդանօթաձգութիւն սերբական դիրքերի դէմ աջ զօրաթևում և փորձեց յարձակումների դիմել, բայց վանվեց սերբերից։

Սեպտ. 29-ին աւստրիացիք յարձակում գործեցին Կուրեաչիցայի վրա, բայց ետ մղվեցին։ Վերջին օրերը եկած անձրևները աւելացրել են Դրինայի ջուրը, որ քշել-տարել է թշնամու ձգած կամուրջները։ Զրի վրա լողում են թշնամու բազմաթիւ դիակներ և ձիեր։

Լոյս սեպտ. 30-ի գիշերը կռիւներ եղան Սավայի ձախ ափին և Ալա-Ցինգանլիա զօրաճակատում. թշնամու բոլոր յարձակումները եռանդով ետ են մղված։ Աւստրիացիք նահանջեցին մեծ արագութեամբ դէպի Բէժանիէ, թողնելով 300 սպանված և շատ վիրաւոր։ Թշնամու շատ զինուորներ անձնատուր են լինում սերբական առաջապահ զօրախմբերին, որոնք առաջանում են դէպի Բէժանիէ և Զեմլինի կայարան։ Սեպտ. 30-ին մնացած զօրաճակատում ոչինչ էական բան տեղի չունեցաւ։

ԲԵԼԳՐԱԴ.—Վերջին երկու օրվայ ընթացքում պատերազմաբեմում տիրում է համեմատական հանգստութիւն։

ԲԵԼԳԻԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԿՆՈՒՄԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
2 հոկտեմբերի

ՀԱՎՐ.—Բէլգիական կառավարութիւնը, հեռանալով Բէլգիայից, դիմեց ազգաբնակութեանը մի կոչով, որի մէջ յիշեցնում է, որ արդէն 2½ ամիս է, ինչ բելգիացի զինուորները հերոսաբար պաշտպանում են մայրենի երկիրը։ «Թշնամին,—ասված է կոչի մէջ,—յոյս ունէր ոչնչացնել բէլգիական զօրքին Անտվերպէնում, սակայն նահանջը, որ կատարվեց օրինակելի կարգ ու կանոնով և բնաւ չարաչարեց բելգիական զօրքին, ապահովեց Բէլգիայի ռազմի օյժերի ամբողջութիւնը, որանք չը ծալելով ձեռքերը կը շարունակեն կռիւը յանուն արդարութեան գերագոյն իդէալների։ Այնու ամենայնիւ կառավարութիւնը անհրաժեշտութիւնից դրդված պէտք է տեղափոխվի ժամանակաւորապէս այնպիսի մի տեղ, ուր կառավարութիւնը հնարաւորութիւն ունենայ շարունակել իր գործունէութիւնը՝ չընդհատելով տէրութեան գերիշխան իրաւունքների իրականացումը։ Այդ պատճառով կառավարութիւնը հեռանում է Օստէնդէից և ժամանակաւորապէս իր բնակավայր ընտրեց Հաւրը, որ հանրապետութեան կառավարութիւնը, արտայայտելով իր վեհանձն վերաբերմունքը առ Բէլգիան, թողնում է նրան օգտվել իր գերագոյն իրաւունքների բովանդակ ամբողջութեամբ և իր իշխանութեան ու պարտականութեան իրագործման անսահմանափակ ազատութեամբ։ Այն ժամանակաւոր փոփոխութիւնը, որին մեր հայրենասիրութեան զգացմունքը պէտք է հնազանդվի, շուտով իր վրէժը կը յայտնէ։ Բէլգիան կը մնայ ընդհանուրի յարգանքի արժանի և դուրս կելնէ այս փորձութիւնից աւելի մեծութեան արժանաւոր, որովհետև ուժից իրաւունքի ու քաղաքակրթութեան համար»։

Մինիստրների հետ միասին Հաւրը եկան մինիստրութիւնների պաշտօնեաները, պապի նուիրակը և դիւանագիտական մարմնի անդամները։ Ալբերտ թագաւորը մնում է զօրքի գլուխ։

ԲՕՐԴՕ.—Տեղեկութիւն ստանալով, որ բելգիական կառավարութիւնը մեկնել է Անտվերպէնից, Պուանկարէն անմիջապէս հեռագրեց Ալբերտ թագաւորին, առաջարկելով Ֆրանսիայի հիւրընկալութիւնը և հաւաստիացնելով, թէ թագաւորական կառավարութեան գերիշխանութիւնը կապահովվի։ Թագաւորը շնորհակալութիւն յայտնեց և յարակցեց. «Մենք սպասում ենք անսասան հաւատով ընդհանուր յաղթութեան ժամին, կուտելով կողք-կողքի ստորը գործի համար։ Մեր տակութիւնն ու եռանդը երբէք չեն թուլանայ»։

Բրօկվիլը հեռագրեց Վիվիանիին, շնորհակալութիւն արտայայտելով բելգիական կառավարութեան օգնոյնի համար և յայտնելով, թէ Բելգիան զոհաբերելով ամեն ինչ պատի, իրաւունքի ու ազատութեան պաշտպանութեան համար՝ ոչնչի մասին չէ ցաւում կատարված պարտականութեան գիտակցութեամբ և դաշնակիցների գործի յաղթանակի հաւատով։ Վիվիանին պատասխանեց. «Հանրապետական կառավարութիւնը հպարտ է նրանով, որ կարող է հիւրընկալել վեհանձն ու քաջարի ազգի կառավարութիւնը, որը, իրան զոհաբերելով պատին ու պարտականութեանը, ցոյց տուեց ընդհանուր գործին այնպիսի մեծ ծառայութիւն։ Ես հաւատացած եմ,—վերջացնում է Վիվիանին,—որ դաշնակից ազգերի սերտ միութիւնը կապահովվի վերջնական հետևանքում արդարադատութեան ու իրաւունքի յաղթանակը»։

Բրօկվիլը և Միլիէրանը նոյնպէս փոխանակեցին հեռագիրներ։

ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—

(Պետ. Հեռ. Գործ.)
2—3 հոկտեմբերի

ԲՕՐԴՕ.—Պուանկարէն Միլիէրանէ և գեներալ Դիւպարժի ուղեկցութեամբ այցելեց Բլանկֆօրտի զինուորական հիւանդանոցը, որ հիմնել է ռուսաց դեսպանատունը տ. Իզվոլսկայայի գլխաւոր ղեկավարութեամբ։ Դիտելով հիւանդանոցը, Պուանկարէն և Միլիէրանը արտայայտեցին ռուսաց դեսպանին և տ. Իսվոլսկայային երախտագիտութիւն։

ԼՕՆԴՕՆ.—Բոլգարական դեսպան Մաջեարովը, որ պաշտօնով տեղափոխվում է Պետրօգրադ, մեկնեց Ռուսաստան։ Մեկնելուց առաջ՝ Մաջեարովը ասաց, որ Բոլգարիան կը մնայ հաւատարիմ իր չէզոքութեանը, որովհետև ստեղծված դրութիւնը ստիպում է նրան վարել այդպիսի քաղաքականութիւն, և Բոլգարիան ոչ մի պայմանով չի պատերազմի ընդդէմ Անգլիայի և Ռուսաստանի։

ՊԱՐԻԶ.—Միացեալ սոցիալիստների խմբակի նիստում Սէմբան և Դէդը պարզեցին իրանց մասնակցութեան ընթացքը կառավարութեան հետ ազգային ինքնապաշտպանութեան գործում։ Խմբակի անդամները միաբերան վստահութիւն յայտնեցին Սէմբային և Դէդին և հաւանութիւն տուին այն մասնակցութեանը, որ նրանք ունենալու են ա

ռաջիկայում կառավարական ընդհանուր աշխատանքում։

ՊԵՏՐՈԳՐԱԴ. — Աւստրօ-Ունգարիայում մատակարարական հարցը աւելի ու աւելի է սուր կերպարանք ստանում։ Գերման և աւստրիացի առևտրականներն անաջող փորձեր արին հաց գնելու չէզոք պետութիւններում։ Վիէննայում գործազուրկների թիւը աճում է ամեն օր։ Ներանցից շատերին սպառնում է սովամահութիւն։ Տեղական իշխանութիւնների հաշւով անհրաժեշտ է ամենայն օր բաժանել մօտ 100,000 ձրի ճաշ։ Բոսնիայի ազգաբնակութիւնը թշնամաբար է վերաբերում դէպի աւստրիական զօրքերը, գիտակցելով որ բոպէն հասել է տապալելու աւստրիական բռնակալ լուծը։ Աւստրօ-Ունգարիայում շարունակվում են յուզմունքները, որոնց ճնշում են ամենախիստ միջոցներով։ Բազմաթիւ անձինք տառապում են բանտերում։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ.—Ալէքսանդրօվեան գաւառում պատերազմական ժամանակի հիման վրա յարքունիս գրաւվեց գերմանահպատակ Բաղովսկիի միլիոներ արժեցող անշարժ կայքը։

ԼՕՆԴՈՆ.—Պարլամենտական բանւորական կուսակցութեան լիդէրները և բանւորական սինդիկատների գլխաւոր ներկայացուցիչները բանաձևով անհրաժեշտ են գտնում՝ հացնել ներկայ պատերազմը մինչև իր վախճանին, որպէսզի ընդմիշտ ոչնչանայ գերմանական միլիտարիզմի լուծը։

Պօրտուգալիայի ազգաբնակութեան համակրութիւնը դէպի Մեծ Բրիտանիան օրէ-օր աճում է պատերազմի սկզբից։ Պօրտուգալիան պատրաստ է ամեն պատահականութեան, նաև նրան, որպէսզի օգնութիւն ցոյց տայ Մեծ Բրիտանիային ամենուրեք, ուր հարկաւոր լինի, ուզած բոպէին։ Վաղը Պօրտուգալիայում յայտարարվելու է մասնակի զօրահանութիւն։ Հակառակ տարածված լուրերի, Պօրտուգալիան պատերազմ չէ յայտարարել Գերմանիային։

ՏՈԿԻՕ.—Գերմանացիք Ցինդաօյում այրել են 3 առևտրանաւ։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.— Պլմուտից հեռագրում են, որ եկան հնդիկ զօրքերի առաջին խմբերը։

Բէյտէլի գործակալութեանը հաղորդում են Լիսաբոնից, որ Անգոլի նահանգապետը պատերազմական դրութեան մէջ է յայտարարել ամբողջ Պօրտուգալական Կոնգօն։

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՑԱՆ.—Երէկ հոգեհանգիստ կատարվեց բուսմինական թագաւոր՝ ռուսաց զօրքի ֆելդմարշալ Կարլի յիշատակին։ Ներկայ էին գերագոյն զօրահրամանատարը և շտաբի պաշտօնեաները։

ՊԵՏՐՈԳՐԱԴ.—Ներքին գործերի մինիստրի կարգադրութեամբ մատակարարական զումարից 10,000 բուբլի է բաց թողած Խօլմի նահանգի ազգաբնակութեանը շտապով օգնելու համար, որ տուժեց պատերազմից։

ԿՕՊԵՆՀԱԳԷՆ.—Պրինց Վիդը մայորի աստիճանով ընդունվեց գերման գիներալ-շտաբի մէջ և մեկնեց գործող բանակը։

Գերմանական մամուլը սաստիկ յարձակվում է Անգլիայի վրա և փոխել է իր տոնը Բելգիայի վերաբերութեամբ, օրին խղճում է, ասելով որ վերջինս խաբվեց ադիւնուշա Ալբիոնից։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեր. Դորձ.)

2 հոկտեմբերի

ՈՒՐՄԻԱ.—Քիւրդերի Չարդը Ուրմիայում նրանց վրա թողեց ահագին ապառութիւն։ Խարկի ցեղի պետ Քէբիմ խանը դիմեց հիւպատոսին խնդրելով ներում, խոստանալով կատարել բոլոր պահանջները։ Կարակուզանի մօտ քիւրդերը յանկարծակիի եկան մեր զօրամասի երևալուց, մեծ կորուստներ տուին և փախան երեք ուղղութեամբ։

ՀՌՕՄ.— Սան-Զուլիանոյի առողջական դրութեան մէջ նկատվեց մասնակի բարելաւում։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Երբ եղբ. Բէկստոմները աւտոմօբիլով Դէշովի օրդու հետ միասին գնում էին կարել թագաւորի թաղմանը, երիտասարդ-թիւրք Թահսինը ատրճանակով ծանր վիրաւորեց Նօէլ Բէկստոմին, որի թոկերի միջով անցաւ գնդակը, երկու գընդակով թեթև վիրաւորեց նրա եղբօրը, Դէշովի գլխարկը միայն ծակվեց։ Զարագործը կալանաւորվեց. նրա մօտ գտնվեց անցագիր, որ վաւերացված է Կ. Պոլսում սեպտ. 26-ին։ Պարզվեց, որ նա եկած էր Բուխարէստ Սօլունից։ Վիրաւորվածների դրութիւնը վտանգ չէ ներշնչում։ Քննութիւնը շարունակվում է։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.—Առաւօտեան ժամը 7-ին կաթոլիկ արքեպիսկոպոսը հոգեհանգիստ կատարեց այրի թագուհու, թագաւորի և թագաւորական ընտանիքի ներկայութեամբ։ Ժամը 9-ին ուղղափառ հոգևորականութիւնը միտրոպոլիտի և եպիսկոպոսների գլխաւորութեամբ կատարեց հանդիսաւոր հոգեհանգիստ։ Ներկայ եղողների թիւն էին, բացի թագաւորական գերդաստանից, մինիստրները, դիւանագիտական մարմինը և բարձրաստիճան անձինք։ Դրանից յետոյ դագաղը դրվեց դիակառքի վրա և ուղարկվեց հիւսիսային կայարանը։ Սգերթը անցաւ երկշարք կանգնած զօրքերի և բազմահազար ամբոխի միջով։ Հանգուցեալ թագաւորը, համաձայն նրա կամքի, թաղվելու է Կուրտէ Ադարջէշ վանքում։

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

— Վիէննայում տեղեկութիւններ են ստացվել, թէ իբր Բօսէրդամ են գալիս անգլիական զօրքեր։

— Եապօնացիք վերցրել են Դուշան լեռը, որ համարվում է Ցինդաոյի գլխաւոր ամրութիւնների բանալին։ Այդ լերան վրա եապօնացիք դրել են մեծ թնդանօթներ։

— Միայն Հոլանդիա են փախել էշ միլիոն բելգիացի։

— «Secolo» լրագրի ասելով, Տիրոլի նահանգապետը յայտարարել է, թէ Իտալիայի հանդէս գալու դէպքում (Աւստրիայի դէմ), Տրիէստ քաղաքը անմիջապէս գրաւելի կը հաւասարվի։

— Աւստրիան և Գերմանիան 20 միլիոն ֆրանկ են յատկացրել բումինական մամուլի մի քանի օրգաններին՝ հակառուսական յոդուածներ տպելու համար։

— Բոհէմիայում մի յատուկ քաղաք է շինվում Գալիցիայից փախածների համար։

— Վերջնականապէս պարզվել է, որ այս ձմեռ գերմանական գլխաւոր ոյժերը կուենում են ռուսների դէմ, իսկ արևմտեան պատերազմաբեմում որոշված է միայն ինքնապաշտպանողական տակտիկա գործադրել։

— Գերմանիան այս ամսի վերջերին մտադիր է պատերազմ սկսել Անգլիայի դէմ։

— Բումինական կառավարութիւնը տեղեկացրել է բոլոր մեծ պետութիւններին, թէ պատգամաւորութիւններ ուղարկելը՝ թագաւորի թաղմանը ներկայ գտնվելու համար՝ բոլորովին աւելորդ է ներկայանում պատերազմի պատճառով։

— Շուտով 10 կօպէկ իւրաքանչիւր ղրի վրա տուրք է նշանակվելու, եթէ թոյլատրվի գինու և գարեջրի վաճառումը մասնաւոր անձանց։

— Անտվերպէնի ռմբակոծութեան ժամանակ գերմանացիք «Ցէպպէլիններից» նետեցին 140 ռումբ։

— Գերմանացիք 500 միլիոն ֆրանկ պատերազմական տուրք են նշանակել Անտվերպէնի վրա։

— Աւստրիական զօրքերում և Լվովում խօլերան շարունակվում է։

— Վէնիզէլոսը շտապով մեկնում է Պետրոգրադ։

— Լլոյդ Ջորջը տեղեկացրել է անգլիական կառավարութեան, թէ անգլիական բանկիրների ժողովը որոշել է յանձնել կառավարութեանը պատերազմական կարիքների համար իբրև անտոկոս փոխառութիւն՝ մի միլիարդ ֆունտ ստերլինգ (10 միլիարդ բուբլի)։

— Արրասի մօտ ֆրանսիացիք փառաւոր յաղթութիւն տարան գերմանացիների վրա, որոնք հեռացան 13 մղոն և կորցրին 12,000 մարդու։

— Գերմանացիք ամրացնում են Անտվերպէնը, որտեղից ուղարկելու են «Ցէպպէլիններ»՝ Լօնդօնի վրա ռումբեր նետելու նպատակով։

— Էլզասում գերմանացիք նահանջել են դէպի Միւլհաուզէն։

— Ռուսաց զօրքերը պաշարել են Մունկաչը։

— Անտվերպէնի առումը գերմանացիներին շատ թանգ է նստել։

— Բումինական թագաւորը մեռաւ այն բոպէին, երբ ընդունել էր գերմանական դեսպանին ունկնդրութեան։ Թագաւորի վերջին խօսքերն էին՝ «խղճացէք հայրենիքին, արիւն մի թափէք»։ Թագաւորը կտակել է գահաժառանգին չէզոք մնալ ներկայ պատերազմում և չը խզել Բումինիայի բարեկամութիւնը Գերմանիայի և Աւստրիայի հետ։

— Լրագիրների ասելով, Վիլհելմ կայսրի որդիներից մինը գտնվում է Զենտօխօվում։

— Եգիպտոսից ստացված տեղեկութիւնների համաձայն, տեղացիների և անգլիացիների միջև տեղի են ունենում արիւնաշիղ ընդհարումներ։ Անգլիան 24 ժամ ժամանակամիջոց տուեց Կ. Պոլսում գտնվող խրդիվին՝ մտածելու համար։

— Հաագայում հաստատվել է հակագերմանական համաշխարհային միութիւն՝ գերմանացիներին ամեն կերպ բոյկոտ յայտարելու համար։

— Ռուսաց և անգլիական հիւպատոսների բողոքից յետոյ, Մէշհեդում փակվել է «Նով-Բէգարդ» լրագիրը՝ պատերազմի մասին սուտ տեղեկութիւններ տալուն համար։

— Պետրոգրադի ֆէլդշէրական ընկերութիւնը միջնորդել է փոխարինել գերմանական «ֆէլդշէր» բառը՝ «բժշկական օգնական» դարձուածքով։

— «Пет. Куур.»-ին հեռագրում են Կոպենհագէնից, որ գերմանացիք եռանդուն յարձակումների են դիմել Բէլֆոր-Վերդէն ռազմագծում, մանաւանդ ուղղելով սոսկալի կրակ Բէլֆորի դէմ և «Ցէպպէլիններից» ռումբեր նետելով նրա վրա։

— Բելգիական կառավարութիւնը բողոքեց, որ ֆէլդ-մարշալ Ֆոն-դեր-Գոլց փաշան սիստեմատիկաբար տանջում է Բելգիայի ազգաբնակութեանը քաղցած պահելով։

— Գերմանացիք արշաւանք են սկսել Սանդոմիր-Իվանգորոդ ռազմագծում։ Կռիւը տեղի է ունենում Վարշավայից դէպի արևմուտք 170 վերստ տարածութեան վրա։ «Н. В.»-ի հաշւով, Վիսլայի ձախ ափին գերմանացիք կենտրոնացրել են 10 զօրաբանակ։

ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

— Կ. Պոլսին սով է սպառնում ի նկատի ունենալով, որ Դարդանէլի փակումով Ռուսաստանից այլ ևս մթերք չէ արտահանվում Թիւրքիա։ Հացահատիկի ներմուծումը Բուլմինիայից նոյնպէս դադարել է։ Անատոլիայի երկաթուղիներով աշխատում են կենսական մթերքներ հացնել սուլթանների մայրաքաղաքին, որի ազգաբնակութեանը միայն ալիւր հարկաւոր է օրական առնուազն 6000 պարկ։

— Կ. Պոլսից հեռագրում են, որ երեսն հանվեց նոր դաւադրութիւն Էնվէր-փաշայի դէմ։ Կատարվում են համատարած խուզարկութիւններ և ձերբակալութիւններ։ Կազմակերպվում է գաղտնի ոստիկանութիւն գերմանացիների մասնակցութեամբ։

— Աթէնքից հեռագրում են. «Ցոյն լրագիրները ստոյգ աղբիւրներից տեղեկութիւններ ստացան, որ Թիւրքիան շուտով շարժվելու է դէպի կովկասեան սահմանը. գեներալ Սանդէրսը թիւրքաց զօրքերին առաջնորդելու է Կովկաս։ Էնվէր-փաշան յանձն առաւ Դարդանէլի պաշտպանութիւնը»։

— Գերմանական շոգենաւերը Սուլինայի վրայով մեկնում են Կ. Պոլիս թիւրքական ռազմանաւերի պաշտպանութեամբ։

— Բոլգարական պրեմիէրը յայտնեց Սոֆիայի թիւրքաց դեսպանին, որ Բոլգարիան համերաշխ է մնում Թիւրքիայի հետ։ Կ. Պոլսի բոլգարական դեսպանին յանձնարարված է յայտնել այդ մասին մեծ վեզիրին։ Կ. Պոլսում այդ յայտարարութիւնն ընդունվել է ուրախութեամբ, ի նկատի ունենալով որ անաջողութեան հանդիպեց եղբ. Բէկստոմների միսսիան՝ թելադրելու Բոլգարիան Ռուսաստանի և Անգլիայի կողմը։

— Անտվերպէնի առումը և բումինական թագաւորի մահը նորից ոգևորեցին թիւրքերին։ Կ. Պոլսում խօսում են ռուսների դէմ կուելու անհրաժեշտութեան մասին։ Անգլիայի հետ յարաբերութիւնները վատթարանում են։

— Անգլիան կտրականապէս հրաժարվել է հեռացնել իր նաւատորմը Դարդանէլի մօտից, քանի թիւրքաց նաւատորմը կը դեկավարեն գերմանացիք։

— Զաթալջայում թիւրք զօրքերի մէջ ապստամբութիւն է քաղցածութեան հողի վրա։

— Բ. Դուռը չը համաձայնեց բանալ Դարդանէլը թէկուզ երկու օրով։

— Տիեզերական պարիսպքին առաջարկված է մեկնել Կ. Պոլսից, որովհետև թիւրքյունական պատերազմն անխուսափելի է։

— Գերմանիան խոստացել էր Թիւրքիային մի միլիարդ ֆրանկ զօրահանութեան և դէպի Եգիպտոս ու Կովկաս արշաւանքի ձեռնարկութեան համար։ Բայց նա տուել է մինչև այժմ 7 միլիոն ֆրանկ։ Այդ բանից մեծ դժգոհութիւն է տիրում երիտասարդ թիւրքերի շրջանում։

— Վերջին տեղեկութիւնների համաձայն, Թիւրքիան վճռել է չէզոք մնալ։

— Կ. Պոլսից հեռագրում են, որ թիւրք օֆիցէրները պահանջում են իշխանութիւններից հաւասարեցնել իրանց իրաւունքները գերմանացիների ունեցած իրաւունքների հետ։

— Կ. Պոլսում, ինչպէս լուր է պտտվում, կատարվում են գաղտնի մահապատիժներ։

— Անգլիան նախազգուշացրել է Թիւրքիային, որ անգլիական նաւատորմին հրաման է տրված՝ չը համարել թիւրքաց նաւատորմը բոլորովին չէզոք և հսկել նոյնիսկ ռազմանաւերը, որպէսզի նրանց վրա գերմանացի օֆիցէրներ և զինուորներ չը լինեն։

— Թիւրքաց նաւատորմը գտնվում է Մարմարա ծովում։

— Մինչև այժմ Գերմանիայից Թիւրքիա է մտել 70,000 հրացան։

— Լուրերի համաձայն, Կ. Պոլսում խուզարկութիւններ և ձերբակալութիւններ են հայերի մէջ։

— Կ. Պոլսում խուժանը երբ թէ ցոյցեր է անում գերմանական դեսպանատան առաջ։

ԿԱՑԶԷՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Պարիզի լրագիրները տեղեկութիւն են ստացել «կայզէրի ծրագրի» մասին, որին վիճակված չէր կատարվել։

Հրաման տալով Բելգիայի վրայով արշաւելու մասին, կայզէրը ասել է կանցլէրին. «Աւելի լաւ է Անգլիան մեզ պատերազմ յայտարարի, քան մենք հրաժարվենք մեր կայծակնաթռիչ յարձակման ծրագրից»։

Մտադրութիւն է եղել Պարիզը գրաւելուց յետոյ պատերազմական գերիներ յայտարարել՝ Պուանկարէին, մինիստրներին, ռուսական և անգլիական դեսպաններին, սենատի և պատգամաւորների պալատի նախագահներին։ Այնուհետև ի նկատի են ունեցել գրաւած ամբոխ յայտարարել ֆրանսիական բոլոր բանկերը։ Այնուհետև ենթադրվում է եղել կալանաւորել Ֆրանսիայի բոլոր նշանաւոր մարդկանց՝ քաղաքական գործիչներին, բանկիրներին, գրողներին, գիտնականներին, մի խօսքով այն ցուցակով, որը կազմել է Պարիզի գերմանական դեսպանատունը զօրահաւաքից առաջ։

Ֆրանսիայի մայրաքաղաքը պէտք է պահպանվէր 600,000-նոց պահեստի զօրքով, մինչ այդ՝ կանոնաւոր զօրքը պէտք է անցնէր Ռուսաստան։

Նախատեսը կայզէրը անգամ կոչ է պատրաստել գերմանական ժողովրդին ուղղված՝ Պարիզը վերցնելու ափիթով։

ՎԻԼՀԵԼՄ ԵՒ ՆԱՊՕԼԵՕՆ

— Լօնդօնի լրագիրները լի են նամակ խմբագրութիւններով, որոնք մանրաման նկարագրում են Նապօլէօնի կեանքը Վատերլոյի ճակատամարտից յետոյ, երբ նրան տեղափոխել են ս. Հեղինէի կղզին, և նրա վերջին օրերը։ Այդ նամակներում միաժամանակ ընդգծվում է այն խորին յարգանքի զգացումը, որ տածել են Եւրոպայի բոլոր ժողովուրդները դէպի կալանաւոր թագաւորը։ Երբ Նապօլէօնին տանող նաւը անցնում էր Անգլիայի ափերով, հազարաւոր ամբոխը անձայն մերկացնում էր իր գլուխը, դրանով մեծագոյն յարգանքի ապացոյցը տալով մեծ կայսր-զօրավարին։ Խմբագրութիւններին ուղղված նամակներից շատերը խօսում են Վիլհելմի ապագայի մասին, և չեն կասկածում, որ դէպի կայզերը Եւրոպայում ոչ-ոք ոչ մի յարգանքի և ցաւակցութեան զգացմունք ցոյց չի տայ։

ԳԷՈՐԳ ԹԱԳԱՒՈՐԸ ՀՐԷԱՑ ԶԻՆՒՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

— Լօնդոնում բնակվող հրէայ Բենիամին Զօնի լորդ Սամֆիօրահեմից ստացել է հետևեալ հեռագիրը.

«Նորին մեծութիւնը հրամայեց ինձ ողջունել ձեզ այն բանի առիթով, որ ձեր որդիներից չորսը գտնվում են պատերազմում։ Նորին մեծութիւնը խնդրում է յայտնել ի գիտութիւն նրանց, որ նա շատ բարձր է գնահատում նրանց և միացեալ պետութեան ուրիշ հազարաւոր հրէաների լոյալութիւնը»։

ԻՇՄ. ԲԵՀԲՈՒԹԵԱՆՆԵՐԸ ՌՈՒՍԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄ

— Վերջին ժամանակներս լրագիրներում տեղեկութիւններ երևացին, թէ հայազգի երիտասարդ իշխ. Ն. Բեհբութեանը պատերազմի դաշտում աչքի ընկնող քաջութիւններ է գործում. օրինակ՝ նա գերմանական զօրաճակատում ունեցած մի ընդհարման միջոցին թշնամու հետևակ մի զօրամասի հրամանատարին սպանել է։ Եւ. դրա հետևանքն այն է լինում, որ իշխանի զինուորները, ոգևորված այդ քաջութիւնից, գրոհ են տալիս իր հրամանատարը կորցրած թշնամու զօրամասի վրա և նրան մասամբ կոտորում ու մասամբ ցրիւ տալիս և փախուստի դարձնում։

Այդ առիթով գուցէ աւելորդ չը լինի յիշել, որ իշխ. Բեհբութեանները ռուսական գրեթէ բոլոր պատերազմներին մասնակցել են և աչքի ընկել իրանց խիզախութեամբ։

Օրինակ՝ 1812 թ. իշխան Վասիլ Բեհբութեանն էր, որ զսպեց Սմոլենսկ ու Թելաւի մահմեդական տարրերին, որոնք այն ժամանակ մեծ վնասներ էին տալիս քրիստոնեայ ազգաբնակութեան։ Նա նոյն թվականին մասնակցել է Հայրենական պատերազմին։ Ապա 1828 թ. օգոստ. 5-ին նոյն իշխանը նուաճեց Ախալցխան և Ախալքալաքը, իսկ 1838 թ. մասնակցեց Լեհաստանի պատերազմին, երբ և իր եղբօրը՝

մայրը զգաց և կարմրելով այդ յայտնեց ամուսնուն։ Ամուսինը փետրի պէս բարձրացրեց նրան իր ձեռքերի վրա և համբուրեց այնպէս ջերմ, որպէս չէր համբուրել մինչև այդ։

Ճակատագիրը նախանձում է բաղդաւորներին,—ասում է հին առածը։ Այդպէս էլ պատահեց այս անգամ։

Որպէս անսպասելի կերպով պայթող սարսափելի օրոտ, նրանց կայծակնահար արաւ եւրոպական պատերազմի լուրը։ Աւստրիան և Գերմանիան մերկացրել են սրերը։ Անմեղ արիւնն արդէն ներկել էր նրանց սրերի երանը և վրէժի կոչ էր արել առ երկինք։ Հասաւ ճակատագրական ժամը։

Նրա ամուսինը մէկն էր նրանցից, որոնք պէտք է կանգնէին զօրականների շարքերում։ Մարդը այդ տեղեկութիւնը ընդունեց համեստաբար հանդիսատ կերպով, և մի օտար, մինչ այդ նրան անծանօթ հիացմունքի զգացմունք տիրեց նրան, որը որպէս հզօր ալիք մտցնում էր նրան այն անհամար հազարներին, որոնք ներկայ բոպէին մարդկութեան պատմութեան մէջ նոր դարաշրջանի ստեղծողներ պէտք է դառնային։

— Ով սուր է մերկացնում, նա սրով էլ կընկնի,—ասաց նա և մի կողմ շպրտեց բահը, որով աշխատում էր դաշտում.—կամենում եմ կուել և մեռնել ոտնահարված արդարութեան համար։

Բայց երբ նա աչքերը բարձրացրեց կնոջ վրա և նկատեց նրա դէմքի յուզումը, նրա

իրանը, որը իր մէջ թագցնում էր իր համար թանգագին կեանքի սաղմը, նրա սիրտը ծանրացաւ՝ ինչպէս անձրևաբեր ամպ։

«Կռիւ հարկաւոր չէ»,—շշնջում էր սիրտը, բայց ոչ օք չը լսեց այդ շշունջը։ «Մնա քո սիրոյ մօտ»—շարունակում էր սիրտը արցունքների միջից։ Բայց պարտականութիւնը իր երկաթեայ ձեռքը դրեց նրա ուսին և կանչեց նրան։

Եւ նա գնաց։ Կինը նրան ճանապարհ ձգեց մինչև շոգենաւ, որը ուղևորվում էր քաղաք, ուր նրան պէտք է միացնէին իր նմանների հետ։ Վերջին համբոյրի ժամանակ կինը, որպէս հնձված հասկ, ընկաւ ամուսնու ձեռքերի վրա։

— Դեռ մի ակնթարթ, մի ակնթարթ էլ մնա ինձ մօտ,—աղերսում էր նա յուսահատութեամբ։

Շոգենաւը սուլեց։ Նա ազատվեց կնոջ գրկից։

— Սիրելիս, ես չէ՞ որ, դեռ երեկոյեան կը գամ... մնաս բարև ասելու։ Ինձ երկու ժամով կը թողնեն։ Լաց մի լինի։ Զօրականի կինը պէտք է ուժեղ լինի...

Եւ մեկնեց։ Կինը կամեցաւ ուժեղ լինել, որ սազում է զօրականի կնոջ, սակայն չը կարողացաւ։ Գլուխը պտտվեց, վշտի բեռը անտանելի ծանր դարձաւ։ Սառը ջղաձգումները բռնեցին նրան։ Զար նախազգացումը սողաց նրա սիրտը։

Ինչ-որ մի զինուոր առաջնորդեց նրան մինչև տուն։ Այժմ չէ՞ որ ամենքը մէկի հարազատներ էին, մէկը ամենքի։

Պառաւ մայրը վախեցաւ, երբ նկատեց նրա մահատիպ գունատ դէմքը, և խսկոյն գլխի ընկաւ, թէ բանն ինչումն է։ Աղջկան պառկեցնելով անկողնում նա գնաց բժշկի տեսից։ Նա գնում էր արագ, փոքրիկ ու անհաստատ քայլերով։

Բժիշկը նոյնը ասաց, ինչ որ ամենքը գիտէին արդէն. նա ծնում էր ոչ իր ժամանակին։ Ցետոյ անտարբերութեամբ, ինչպէս միշտ, նա ամեն ինչ պատրաստեց երեխայի համար, որին մահացրեց պատերազմը դեռ լոյս աշխարհ չեկած։

Բայց պատահեց մի ուրիշ բան։ Նա մեռած երեխայ չը ծնեց, այլ մի քանի ժամ անց մեռաւ հէնց ինքը։ Մայրական փխրուն, երիտասարդ սիրտը չը կարողացաւ տանել յանկարծակի հարուածը և փշրվեց, ինչպէս յախճապակեայ ամանը կոպիտ ձեռքերի մէջ։ Բժիշկը անյուսալի կախված ձեռքերով կանգնած էր անկողնու մօտ։ Պառաւ մայրը պոկում էր իր նօսր մազերը և աղօթում։ Ներկայ եղողները ցնցվեցին նրա աղօթքից։

— Անողորմ և արդարադատ Աստուած. ես չեմ խնդրում Քո ողորմութիւնը։ Նա ինձ էլ հարկաւոր չէ։ Վրէժխնդրութիւն ուզարկեր ինձ, ով տեր Աստուած։ Թող իրանց արեան մէջ լողան նրանք, ովքեր հնարեցին այս կռիւը։ Թող նրանց տների քարը քարին չը մնայ. թող նրանց տների տեղը բանջար բուսնի, թող սուվն ու ցաւը ոչնչացնի նրանց ընտանիքը։ Իսկ ինձ, ով տեր Աստուած, դարձրու մի սև ագռաւ, որ ես կարողանամ ծվատել մարմինը նրանց... Մի սև ագռաւ։ Ես կամենում եմ ծվատել նրանց... հա-հա-հա...

Նա ծիծաղեց որպէս խելագար, և ամենքը ցնցվեցին սարսափից.

Երեկոյեան վերադարձաւ ամուսինը։ Մահվան լուրը դիմաւորեց նրան տան շեմքում։ Երկու մամ բռնկլատում էին այն մահաճակալի գլխավերևը, որի մէջ պառկած էր նա, սաւանի մէջ փաթաթած։ Պառաւ մայրը նստած էր նրա կողքին, և նրա կատաղեալ խելացնոր աչքերը գանգի խոռոչներից նայում էին ինչպէս մեռեալի աչքեր։

Առանց խօսքերի նա ըմբռնեց եղելութիւնը և ընկաւ ծնկների վրա։ Նրա կրծքի մէջ սարսափելի փոթորիկ բռնկեց։

Նրա գրպանում կար մի փայլուն ատրճանակ։ Զը լինի թէ քունքին դէմ տայ...

Օ, ոչ, դա զօրականին արժանի բան չէ։ Զէ՞ որ ինքը զօրական է։ Եւ իսկոյն նա ամրապնդեց իրան ու հանդատացաւ՝ ինչպէս ծայրը ծովում։ Նա թեքվեց դէպի դիակը և վերջին անգամ համբուրեց նրա մարմարեայ ճակատը։

Նոյն գիշերը, նրա իսկ խնդրանքով, նա ուղարկվեց գործող զօրաբանակը, կուի ամենաառաջի տեղը։

Նա սպասում էր վրէժխնդրութեան։

գեներալ իշխ. Դաւիթ Բեհբութեանին Վարշավայի կօմենդանտ նշանակեց, ուր և մեռաւ նաւ Ապա՝ Դաղստանի պատերազմները աւարտվելուց վերջ, 1853—54 թ. ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, որը վերջացաւ Կարսի նուաճմամբ, նոյն իշխան Վասիլը նշանակվում է Արարատեան նահանգի զորքի ընդհ. հրամանատար։

1877—78 թ. ռուս-թիւրքական պատերազմին մասնակցում էին իշխ. Արսէն և Դաւիթ Բեհբութեանները, որոնցից առաջինն իր օրինակելի քաջութեան համար ստանում է գեներալութեան աստիճան և ոսկեայ թուր, իսկ իշխ. Դաթիկօն սպանվում է Բայազիտի ու Արդահանի մօտ, որտեղ գտնվում է նրա արձանը։

Ռուս-եաթնական պատերազմին մասնակցել է իշխ. Գէորգ Գր. Բեհբութեանը, որ իր քաջութեան համար արժանացաւ ս. Աննայի երկրորդ աստիճանի շքանշանին և ստացաւ ոսկեայ սուր։

Իսկ այս ներկայ պատերազմին մասնակցում են Բեհբութեան տոհմից եօթը հոգի, որոնցից արդէն երիտասարդ իշխ. Ն. Բեհբութեանը մեծ անուն հանեց։

Ծ ղ ն է թ Ստ. ք. Երամեան

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԻԴԷՕԼՕԳԻԱՆ

IV

Ես այն ժամանակ (1875—78) իմ ամբողջութեամբ այն հաստատ գիտակցութիւնն ունէի, որ Թիւրքիայի հետ ունեցած մեր պատերազմը համապատասխանում էր Ռուսաստանի կոչմանը և Արևելքում նրա ունեցած շահերին։

«Ռուսաստանի կոչը իսլամի դէմ, որպէս քաղաքական ոյժի,—գրում էի ես այն ժամանակ*),—շարունակվում է ահա մի քանի դար։ Ռուսաստանը այդ մեծ կռիւի մէջ չարաչարեց քրիստոնէական քաղաքակրթութիւնը՝ և այդ քաղաքակրթութեան հովանու տակ նա ոչ միայն ետ մղեց ասիական վայրենի հորդաներին, այլև լայն հրապարակ բաց արեց եւրոպական կուլտուրայի համար, հեռուները սեղմելով մուսուլմանական տիրապետութեան սահմանագծերը։ Ռուսաստանը մաքրեց Սև-ծովի ամբողջ հիւսիսային ափը մուսուլման իշխանութեան փտեցուցիչ ազդեցութիւնից։ Նա էր նոյնպէս, որ վերջ դրեց իսլամական տիրապետութեանը կովկասեան լեռների ձիւնապատ գագաթներից և Մէջին Ասիայի աւազոտ տափաստաններից այն կողմ. իսկ բուն Եւրոպայում նա Թիւրքիայի ձեռքից կորզեց Սերբիան, Ցունաստանը և Ռումինիան։

«Այդ կռիւը դեռ չի վերջացել։ Դեռ մեզ արիւնակից և հաւատակից շատ միլիոնաւոր բնակչութիւններ հեծում են մուսուլմանական լծի տակ. և իշխող իսլամը դեռ փակել է մեր ազատ ճանապարհը դէպի Մէջերկրական ծովը։ Ռուսաստանը պէտք է մինչև վերջը տանի ազատութեան սուրբ գործը և վերացնէ իր սեփական տան դռներից խայտառակ պահապաններին։ Այդ նպատակին հասնելը Ռուսաստանի պատմական կոչումն է, իսկ պետութեան համար, աւելի քան առանձին անհատների, անհրաժեշտ է գիտակցել իր ճշմարիտ կոչումը, հետևել նրան առանց շեղումների և տատամսելթեան, իր բոլոր ոյժերը կենտրոնացնելով այն նպատակի վրա, որը պէտք է ներկայացնէ նրա քաղաքական ձգտումների իդէալը։ Իր քաղաքական կոչումին մշտապէս հաւատարիմ մնալով միայն պետութիւնը դառնում է ուժեղ, յարգված և զօրեղ. իսկ դաւաճանութիւնը քաղաքական իդէալներին, կամ նոյնիսկ դէպի այդ իդէալները անտարբերութիւն ցոյց տալը պետութեանը տանում են դէպի բարոյական ոյժերի նուազում և քաղաքական ոչնչութիւն։

«Պետութեան համար, բացի դրանից, ինչ տեղ նրա կոչումն է, այնտեղ էլ շահը։ Ցամենայն դէպս սա անպայման ճիշդ է արևելեան հարցը լուծելու վերաբերմամբ մեր հայրենիքի ունեցած ձգտումների առիթով։

«...Ռուսաստանի համար ձեռնտու է ազատել բալկանեան սլաւոնները աւստրիական հարաւային սահմանին կից, Սև-ծովից մինչև Աղրիականը ստեղծել սլաւոնական անկախ պետութիւնների մի շերտ, որով մենք միացած կը լինենք մեր արիւնակից և մեզ հետ ընդհանուր շահեր ունեցող ժողովուրդների հետ»։

Ռուսաստանի և միւս սլաւոն ազգերի միմեանց հետ ընդհանուր շահեր ունենալը շատ լաւ են հասկանում Եւրոպայում. դրա համար մեր մէջն եղած փոխադարձ գիտակցութիւնը խանգարելը և սլաւոն ժողովուրդների ընտանիքի մէջ երկպառակութիւն ձգելը մտնում էր մեզ թշնամացող եւրոպական պետութիւնների քաղաքականութեան ծրագրի մէջ։ Սլաւոնների առաջ դնում են Ռուսաստանի ռազմական և աշխարհակալական քաղաքականութեան խորտուբիլակը։

Ռուսաստանի՝ դէպի այլ սլաւոն ժողովուրդների ազգային վերածնութիւն ունեցած համակրանքը աշխատում են սառեցնել այն նախազգուշացումով, թէ ամեն մի ազատված սլաւոնական ազգ մեզ համար մի Լեհաստան կը դառնայ։ Նման առարկութիւնները, պէտք է ասել, գտնում են աւելի ևս թեթևամիտ արձագանքներ թէ մեր հայրենիքում, թէ միւս սլաւոն ազգերի մէջ։ Զգալով իրան միացնել միւս սլաւոն երկիրներ՝ Ռուսաստանի համար կը լինէր կատարեալ խելառութիւն, այն պարզ պատճառով, որ, բացի այդ երկիրների անխուսափելի ներքին բարդութիւնների վտանգը, Ռուսաստանը չէ կարող շերեփի նման եւրոպա խծկվելու ցանկութիւնն ունենալ, քանի որ դրանով իր երկրի ինքնապաշտպանութեան սահմանագիծը անչափ կը մեծանայ։

Աւստրիայի հարաւային սահմանում սլաւոնական անկախ իշխանութիւնների հիմնվելը աւստրիական սլաւոնների ազգային ձգտումների վերաբերմամբ կուենայ այն նշանակութիւնը, որ այդ պետութեան ներքին քաղաքականութեան վրա, անկասկած, բարերար ազդեցութիւն կը թողնի։

Շահերի այդ համերաշխութեան մէջ մենք տեսնում ենք սլաւոն ժողովուրդների միջև եղած պատմական խռովութիւնների և տարաձայնութիւնների դադարման ճշմարիտ գրաւականը։

Թիւրքիայի դէմ ունեցած մեր պատերազմի միւս՝ նոյնքան գլխաւոր նպատակը ես դրել էի ռուս նաւատորմիղի Սև-ծովից դէպի Միջերկրականը ազատ լողալու համար նեղուցների բացումը, մի հանգամանք, որի յաղթութիւնը կախված կը լինէր պատերազմի մեզ համար դրական հետևանքից...

Բայց նեղուցների բացումը շահաւէտ կը լինի արդեօք Ռուսաստանի համար։ Մեր անգլիացի բարեկամները ճիգ են թափում մեզ ցոյց տալու այն վտանգաւոր կացութիւնը, թէ նեղուցների բացումով անգլիական ահեղ նաւատորմիղն իրաւունք ձեռք կը բերէ մտնել Սև-ծով։ Բրիտանական նաւատորմիղն այդ քայլն անելու իրաւունք չունի իսկապէս, թէև նա, եթէ ուզենայ, հիմա էլ կարող է այդ անել, բայց որ նա այդ հնարաւորութիւնից կօգտվի ռուսաց հետ առաջին իսկ զինված ընդհարում ունենալիս, այդ մասին կասկածելը կատարեալ միամտութիւն կը լինէր։ Իսկ Ռուսաստանի համար հարցը դրված է բոլորովին այլ կերպ։ Նա իրաւունք ունի, բայց զրկված է Սև-ծովի վրա եւրոպական մեծ պետութեան վայել նաւատորմ ունենալու հնարաւորութիւնից։ Ռուսաստանը չէ կարող, առանց վնաս հասցնելու իր պատուին և ծովային ոյժերին, Սև-ծովում կառուցել քիչ շատ նշանաւոր զրահակիրներ, մատնելով նրանց ծովային աւազանի այդ նեղ դաշտի մէջ անվերջ բանտարկութեան։

«Ահա այդպիսի պայմաններում Ռուսաստանի համար առաջնակարգ նշանակութիւն ունի, թէ ով և ինչ պայմաններում պէտք է տիրող լինի Դարդանէլին և Բոսֆորին»։

Իսկապէս այն ժամանակ ես կարծում էի, որ Սև-ծովից դէպի Միջերկրականը տանող նեղուցները կամ մերը պիտի լինեն, կամ ոչ ոքինը։

Նեղուցները մերը կարող են լինել միայն այնպիսի պայմաններում, երբ մենք նրանց վրա կառուցենք այնպիսի ամրութիւններ, ինչպիսիք կառուցել են անգլիացիք Ջիբրալտարում, Ադենում, Սինգապուրում, ապահովելով իրանց տիրապետութիւնը Միջերկրական ու Կարմիր ծովերի և Հնդկական օվկիանոսի վրա։

Այս նպատակին մենք կարող էինք հասնել, եթէ Պետրոս Մեծի և Եկատերինէ կայսրուհու դէմ ժառանգները մեր արտաքին քաղաքական խնդիրներում հաստատ մնացած լինէին նրանց կտակների իրագործման մէջ։

Իսկ նեղուցների գրաւումը և մեր տիրապետութեան տակ պահելը 1877—78 թ.-ի մեր յաղթական պատերազմի ժամանակ ես համարում էի անիրագործելի, բայց անկարելի չէի համարում նրանց իսկական և իրական չէզոքացման հնարաւորութիւնը։

Ես կարծում էի, որ ինչպէս քաղաքակրթութեան ու մարդասիրութեան բարձրագոյն շահերը, այնպէս էլ քաղաքական առողջամիտ հաշուեյարդարութիւնը պահանջում են բոլորովին վերացնել Թիւրքական իշխանութիւնը Եւրոպայից։ Յետագայում աբսեելեան հարցի այս անխուսափելի վերջնական լուծումը՝ նշանակում է Թիւրքիայի քրիստոնեայ հպատակների մէջ առաջացնել նոր ապստամբութիւններ, ինչպէս և պետութեան ընդհարումներ Ռուսաստանի և հարևան սլաւ իշխանութիւնների հետ։ Այս ընդհարումները և ապստամբութիւնները իրանք արդէն առիթ կը ծառայեն եւրոպական միջամտութիւնների։

«Սրանից խոյս տալ միայն կարելի է Թիւրքերին (և հարկէ տիրապետութեան) Եւրոպայից հեռացնելով։ Բայց ինչ պէտք է անել Կ. Պոլիսը Թիւրքերի ձեռքից ազատելուց յետոյ»։

Այս հարցի լուծումը միշտ դժուար դրութիւն է ստեղծել քաղաքագէտների, հրապարակախօսների և ընդհանուր խաղաղութեան բարեկամների համար։ Եւ ահա այն ժամանակ ես ինձ վրա վերցրի այդ tabula rasa-ի վրա Կ. Պոլսի և նեղուցների չէզոքացման հետևեալ նախագիծը գծագրելու վստահութիւնը, ազատութիւն տալով ամեն առարկութիւնների։ Զ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—o—

ԴԱ ՄԻ ԱԽՏ Է

Ով չը գիտէ ինքն իրան յարգել, թող չը սպասէ, որ ուրիշները կը յարգեն իրան։

Մի ազգ, որ ինքն իր ունեցած արժանաւորութիւնները չի ուզում ճանաչել կամ գիտակցաբար ոտնակոխ է անում, արժանի է ամենայն արհամարհանքի։ Ցամենայն դէպս նա չի կարող վայելել օտարների յարգանքը։

Որքան հակակրելի է այն անհատը կամ ազգը, որ անսահման սնափառ է, ինքնագոհ և ինքն իր վրա սիրահարված, նոյնքան և աւելի հակակրելի է այն անհատը կամ ազգը, որ ինքն իրան արհամարհում է և ինքն իր գոյութիւնից ամաչում։

Հրէաների ամենախոշոր և ամենաէական թերութիւնը նրանց արհամարհական վերաբերմունքն է դէպի իրանց ծագումը։ Չը կայ աւելի զազրելի էակ, քան նա, որ ամաչում է իր ծնողներին ճանաչել և յարգել։ Եւ ազգամոռ կամ, ճիշդն ասած, ազգատեաց հրէաները, որոնց թիւը, դժբաղդաբար, շատ է, անհամեմատ աւելի վնասակար են իրանց ազգի համար, քան բոլոր հալածանքները, որ կրում է այդ ազգն օտարներից։

Ինչով են անգլիացիք ուժեղ։ սախ և առաջ իրանց ազգային հպարտութեամբ, իրանց ցեղական արժանաւորութիւնների գիտակցութեամբ և այն անդրդուելի հաւատով դէպի իրանց բարոյական ու մտաւոր կարողութիւնը, որ օրքան զօրեղ է, նոյնքան և՝ հեռու մնապարծութիւնից և անհամեստութիւնից։

Վաղուց է, որ հայ ժողովուրդն իր միջից արտադրում է մի բաղադրութիւն, որ քանի գնում այնքան մեծանում է, հետևաբար և՝ այնքան աւելի վնասակար դառնում։ Զուլվում է այդ բաղադրութիւնը զանազան տարբերից։ Կան նրա մէջ և՝ վաճառականներ և նոյնիսկ գործակատարներ, զինուորականներ, պետական պաշտօնեաներ և՝ նոյնիսկ գրագէտներ, համալսարանականներ և՝ նոյնիսկ թեբուներ։

Խօսքս այն բազմաթիւ անհատների մասին է, որոնք իրանց ազգութիւնից չը հրաժարվելով հանդերձ, անում են ամեն ինչ, որ ցոյց տան օտարներին, թէ իրանք բարձր են այդ ազգութիւնից իրանց մտաւոր և բարոյական արժանաւորութիւններով։

Խօսքս հայ «պաուվընիս»-ների մասին է։ Այն ազգային պատուասիրութիւնից զուրկ մարդկանց, որոնք հայ պատմական և ոչ պատմական առաքինութիւնների նսեմացնելը իրանց անձնական արժանաւորութիւնների համար ամուր պատուանդան են համարում։ Հասարակական վայրերում, մասնաւոր շրջաններում, ընտանիքներում, ամենուրեք, ուր կարող են, նրանք չեն ծուլանում ցոյց տալ մի տեսակ ու անպատկառ արհամարհանք դէպի իրանց ազգային արժանաւորութիւնները։ Եւ ինչ է նրանց նպատակը։ Ոչինչ, մի դատարկ մնափառութիւն. համոզել օտարներին, թէ իրանք մի տեսակ երջանիկ բացառութիւն են կազմում այն փոքրիկ ազգի մէջ, որ մեծերից այնքան ստոր է իր բարոյական և մտաւոր կացութեամբ։ Հարկաւ, ոչ մի քիչ թէ շատ խելացի օտարազգի չի կարող յարգել իր հոգու խորքում այդ տեսակ մարդկանց։ Բայց նրանց համար մի մեծ վարձատրութիւն է և նոյն իսկ պարծանքի նիւթ, երբ որևէ մի ազգ օտարազգի ասում է.

— Ահ, դուք բոլորովին նման չէք հայի։

Եւ քանի քանի անգամ մեր հայրենակիցների բերանից լսել ենք. «Գիտէք, ինձ օտարներն հայի տեղ չեն ընդունում»։ Լսել ենք և ի մեծ ամօթ չենք զայրացել և չենք ապտակել այդ տեսակ հայերին։

Ամենից անտանելին և ամենից հակակրելին այդ տեսակ մեր հայրենակիցների մէջ նրանք են, որ օտար մամուլի մէջ են երևան գալիս թէ իբրև խմբագիր և թէ իբրև աշխատակից կամ թղթակից։ Կարդացէք դրանց վայր ի վերոյ դատողութիւնները հայ հասարակական կեանքի, հայ մամուլի, հայ գրականութեան, հայ թատրոնի, հայ ընկերութիւնների մասին և տեսէք ինչ արհամարհական տոն կայ նրանց մէջ, որպէսի անձնական անբարտաւանութիւն։ Կարծես, մի ռուսերէն թերթի հայ խմբագիր կամ հայ աշխատակից մի մեծ պատիւ է անում, մի անագին զիջողութիւն է անում հայ ազգին, որ խօսում է նրա մասին։ Կարծես, հայ ազգը իսկի չի կարող գոյութիւն ունենալ առանց այդ մարդկանց։ Ճշմարիտ, բացառութիւններն այնքան սակաւ են, որ թեւում է, թէ մի տեսակ օրէնք է դարձել հայի արհամարհանքը դէպի իր ազգայինը օտարների մօտ։

Դա մեր կեանքի ամենազազրելի ախտերից մէկն է, որի դէմ անհրաժեշտ է մաքառել։

Շերվանզադէ

ԽՈՐԷՆ ՕԴԱԲԱՇԵՎ

—

Մեր տեղի հերոսը, Խորէն Օդաբաշեվ...

Երևի դուք այդպէս էլ երբէք չէիք իմանայ, որ կայ մեզանում Խորէն Օդաբաշեվ, գուցէ լաւ էլ կը լինէր, որ չիմանայիք և ձեզ համար և նոյնիսկ Օդաբաշեվի համար...

Բայց մարդս դէպքեր է շինում։ Երբեմն էլ դէպքը... մարդիկ...

Մի օր՝ ոչ այնչափ էլ երջանիկ պ. Օդաբաշեվը զարթնեց քնից հերոս դարձած...

Հերոսի հայրը խանութ ունի Թագանրոգում։ Ահա մտնում է այդ խանութը մի կին, որը բաղդաւորութիւն ունի Բէլգիայի զաւակ լինել։ Նրա եղբայրները կռւի դաշտերում հայրենիքն են պաշտպանում. Նրա տունը-տեղը թալանել են գերմանացիները։ Իսկ տիկինը իր մարդու հետ աշխատում է այստեղ հիւանդանոցներում վիրաւորների գուցէ վերջին բոպէները թեթևացնելու համար։ Եւ այդ կնոջ երեսին Խորէն Օդաբաշեվը թքում է։

— Ձեր Բէլգիան մի շնիկ է, իսկ Գերմանիան հզօր պետութիւն, որը պիտի խեղդէ ձեզ...

Կինը յուզված դուրս է գալիս խանութից, իսկ տղայի հայրը՝ փոխանակ գնալու ներողութիւն խնդրելու կնոջից՝ վազում է քաղաքագլխի մօտ և խոստանում է բարեգործական նպատակով երկու-երեք հազար ռուբլի՝ հարցը փակելու համար...

Խորէն Օդաբաշեվը հա՞յ, թէ ոչ...

Եթէ հայ է, ինչպէս կարող էր մեծ Բէլգիային, քաջ Բէլգիային շնիկ հայհոյել...

Մթթէ հայերիս սրտերին մօտ չէ Բէլգիան։

Մթթէ հեռագիրը ձեռքերս առած նախ և առաջ մենք չենք հետաքրքրվում, թէ ինչ դրութեան մէջ է Անվերսը, դիմադրում է թէ ոչ։ Մթթէ անհամբեր չենք սպասում, թէ երբ Բրիւսէլից կը հեռանան տեսօնները...

Մթթէ ազնիւ, քաջ և գեղեցիկ Բէլգիան չէ, որ արհամարհելով իր անկախութիւնը, հարստութիւնը, իր լինելը չը լինելը՝ կուրծքը անվեհեր բացեց գերմանացիների բիրտ հարուածներին և դրանով փրկեց, այո, փրկեց մեր սիրած Ֆրանսիան և գուցէ բոլոր Եւրոպան։

Փրկեց իրաւունքի, ազատութեան և արդարութեան մեծ գործը...

Մթթէ այդ փոքր, բայց ազնիւ և քաջ երկիրը նման չէ մեր ևս հայրենիքին, որը գիշատում է միւս տեսօնը, Ասիայի տեսօնը՝ Թիւրքը։

Եւ մթթէ փոքր Բէլգիայի գործը մեր բոլորիս, փոքր ազգերիս գործը չէ...

Այո, այո, հազար անգամ այո...

Բայց ինչ կայ կայ հայութեան և մի Օդաբաշեվի մէջ... Մի քահանայ...

Մի քահանայ, որ մկրտել է պ. Օդաբաշեվին, գուցէ կը պսակէ Օդաբաշեվին և ի հարկէ անպատճառ պիտի թաղէ պ. Օդաբաշեվին։

Ուրիշ ոչինչ...

Ծնվել հայ, մկրտվել հայ՝ դա դեռ հայութիւն չէ...

Պէտք է լինել հայ, ապրել հայ, մտածել, զգալ հայ...

Եթէ Օդաբաշեվի հայրը այդ երկու-երեք հազարները տար մի հայ ուսուցչի և սովորեցնէր տղային հայերէն, որ նա կարդար մեր լրագիրները, ապրէր մեր վերապրումներով, նա կը լինէր հայ, իսկական հայ և նա երբէք չէր թքի դեղեցիկ և ազնիւ Բէլգիայի զաւակի երեսին...

Նա կը հասկանար, որ բէլգիացիք, ազնիւ բէլգիացիք, որ իրանց անձերը և ինքերը զոհում են յանուն անմահ գաղափարների, մեր եղբայրներն են, մեր յարգանքների և սիրուն կարօտ... Գր. Զալիուշեան

ՏԵԼԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Նորութիւններ Լագօդաղից

Լագօդաղ, 29 սեպտ.

Ամսոյս 27-ին, շաբաթ, Վեհ. Հայրապետի անուանակոչութեան տօնի օրը, աւանդս ս. Աստուածածին եկեղեցում հանդիսաւոր պատարագ մատուցվեց, իսկ վերջը կատարվեց հայրապետական մաղթանք։ Պատարագին ներկայ էր հայոց դպրոցի երկսեռ աշակերտութիւնը ուսուցչ. կազմի հետ և երկսեռ ժողովուրդ։

Նոյն օրը կատարվեց և հայոց դպրոցի բացման օրհնութեան հանդէսը։

Երէկ, կիրակի, օրը ցերեկով, ժամը 1-ին հրացանաղարկ եղաւ Շրջան գիւղի նախկին տանուտէր Վանս Եակօփաշվիլին և իսկոյն մեռաւ. ոճրագործը փախաւ դէպի անտառն ու անյայտացաւ։ Ենթադրում են, որ չարագործը նոյն գիւղացի աւազակապետ Գիւրգի Խաչայաշվիլին պէտք է լինի, որովհետև վաղուց սպառնացել էր վրէժխնդիր լինել այն քանի համար, որ հանգուցեալը տանուտէր եղած ժամանակ բանտ էր նստեցրել Գիւրգիին, բայց բանտից փախաւ և աշխատում էր ու սպառնացել էր վրէժ լուծել։

Եղանակները մեզանում կատարելապէս տաք են. տանձ, խնձոր և այլ մրգերը սկսել են քաղել. այս տարի բերքը առատ է. շրջանիս ժողովրդի մեծամասնութիւնը պարապում է ծխախոտագործութեամբ, որի բերքը՝ պէտք է ասած՝ հղանակների բարեյաջող լինելու պատճառով թէ առատ է և թէ լաւ գոյնի ու տեսակի է. պուդը առ այժմս ծախվում է 10—12 ռ., մինչև անգամ աւելի գնով։ Մթերքները սաստիկ թանգ են. ժողովուրդը նեղվում է թանգութիւնից։

Դրամաշորթները նորից գլուխ են հանել և սկսել սպառնական նամակներ գրել ու փող պահանջել. ոստիկանութեան կողմից հսկողութիւնը կրկնապատկվել է։

Բ. Սուքիասեան

Հեղեղի տուած վնասը

Գեօկչայ (Բագուի նահ.), 28 սեպտ.

Սեպտ. 27-ին մի քանի ժամ տեղ սաստիկ անձրևից առաջացաւ սարսափելի հեղեղ, որ մեծ վնաս հասցրեց Գեօկչայի բնակիչներին։ Փչացած են մօտ 30 տներ իրանց բոլոր ունեցածներով. փողոցները բոլորովին քանդված են. հրապարակում շատ մրգեղէն է փչացած. բնակիչները մեծ մասամբ դուրս էին փախել տներից։ Մարդկային զոհեր չը կան, բայց խաղողի շատ այգիներ բոլորովին փչացան։ Վնասը հասնում է մօտ 40,000 ռ.։

Ս. Արմաղանեան

ՇՈՒՇԱՎԷՐԸ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԾԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՆԵՐԸ

—

Զը նայելով որ մեր գիւղը մօտ 5000 բնակիչ ունի ու 150,000 բնակիչ ունեցող Բօրչալուի գաւառի վարչական կենտրոնն է ու Թիֆլիսից երկաթուղով գտնվում է երեք ժամվայ հեռաւորութեան վրա, այնու ամենայնիւ նա չէ կարողացել մինչև այժմ գաւառի արժանի կենտրոնը լինելը։ Հէնց այդ պատճառով էլ, շարունակ հարց է զարթել կենտրոնը փոխադրել մի ուրիշ աւելի բարեշէն աւան։ Սակայն, զանազան վարչական նկատումների պատճառով միշտ էլ յարմարը համարվել է դարձեալ Շուշավէրը։

Շուշավէրցիք մինչև հիմա չեն ձգտել շատ հող գնել, թէև երբեմն ցանկացել են՝ գիւղը գաւառի առևտրական կենտրոնը դարձնելու համար՝ մեր աւանը քաղաքի վերածել։ Բայց միշտ էլ բարձր իշխանութիւնը մերժել է առաջարկելով դեռ սեփականացնել ըստ կազմի իրանց նադել հողաբաժինները, ապա զարթեցնել այդ հարցը։ Թէև գիւղը քաղաք դարձնելու գլխաւոր խոչընդոտը արդէն վերացել է համաձայն 1912 թ. դեկտ. 20-ի օրէնքի, սակայն այդ դեռ չի բաւի մեր նպատակին հասնելու համար։

Մեր գիւղացիք պիտի շտապեն Շուշավէրը գաւառի արժանաւոր կենտրոն դարձնելու համար մի քանի խոշոր բարեփոխումներ մտցնել։

Մեր կարծիքով՝ այդ բարեփոխումները հետևեալներն են. 1) Հողերը ջրելու համար՝ մեր գետակի վերին հոսանքներում ջրամբարներ շինել՝ ջուրը առատացնելու և կամ Դերեբտ գետից օգտութեան համար արխ անցկացնել, եթէ տեխնիկական պայմանները չեն հանդիսանայ արգելք։ Ջուրը առատացնելուց յետոյ, պէտք է շտապել այգիները փոխարինել ամերիկական վազերով. իսկ խմելու ջուրը առատացնելու համար, պիտի գլխաւոր ջրանցքին մօտիկ աղբիւրները անպատճառ միացնել։ 2) Հրաւիրել փորձված մասնագէտներ, գիւղի ապագայ ընդարձակման մակարդակը գծել ու տասը տարվայ ընթացքում տասը կանոնաւոր փողոցներ հիմնել։ 3) Ծխ. դպրոցի համար օրինաւոր շէնքեր շինել ու ապահովել նրան, բանալ գր.-ընթերցարանի դռները և ապա հիմնել 4-դասեան գիւղագործական բաժանմունքով մի դպրոց։ 4) Ներկայ բուժարանը վերածել ամբուլատորա-հիւանդանոցի ու դեղատունը սեփականացնել։

Ի հարկէ, այս բարեփոխումների երկու կէսելում կառավարութիւնը որոշ չափով կը նպաստէ զէմտվային գումարներից։ Կան մարդիկ, որոնք նոյնիսկ երազում են էլեքտրական լոյսի մասին, բայց այդ մեզ թեւում է վաղաժամ. առաջ պիտի մատաղ սերունդի գլուխները լուսաւորել, ապա գիւղի փողոցները։ Շատերը կասեն, թէ իմ առաջարկած ծրագիրը անիրագործելի է, քանի որ փող չը կայ։

Մեր կարծիքով, դա այնքան էլ ուղիղ չէ. մենք պէտք է դիմենք ինքնօգնութեան. պէտք է ձեռք վերցնել մուրացկանութիւնից։ Շուշավէրի պէս մի մեծ աւան միշտ էլ չնչին տոկոսներով երկար ժամանակով կարող է փող գտնել։

Այս բոլորից յետոյ երբ իշխանութիւնը տեսնի, որ մենք ձգտում ենք բարեփոխել մեր գիւղը և մեր գիւղացիք էլ իրանց հասունացած են զգում քաղաքացի լինելու, իսկոյն Շուշավէրը կը յայտարարվի Բօրչալուի արժանաւոր քաղաք։

Շուշավէր Ցարհատ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԹԻՖԼԻՍ

— Երէկ Թիֆլիսից Պետրոգրադ մեկնեց Մեծ Իշխան Միխայիլ Ալէքսանդրովիչ։ Նորին Բարձրութեանը ճանապարհ էին ձգում բազմաթիւ բարձր պաշտօնական անձինք։

— Քաղ. վարչութիւնը որոշել է Նորին Բարձրութիւն Իշխան Օլէգ Կոնստանտինովիչի հերոսական մահվան առիթով զեկուցում անել քաղ. դումային և հեռագրով ցաւակցութիւն յայտնել Օգոստափառ Ծնողին՝ Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչին։

— Կուսանաց վանքի մայրապետ Թայիբեանը, ներկայանալով փոխարքայի օգնական գեներալ Միշլայեվսկիի ամուսնուն, ընծայաբերել է 50 ռուբլի յօգուտ վիրաւորների և պատրաստականութիւն է յայտնել պատրաստել սպիտակեղէն վիրաւորների համար։ Տիկին Միշլայեվսկայան սիրալիր ընդունելով մայրապետին՝ երկրորդ օրը այցելութիւն տուեց մայրապետին կուսանաց վանքում, բերելով իր հետ նիւթ սպիտակեղէնի համար, որ կոյսերը ուրախութեամբ պատրաստում են այժմ։

— Փոխարքայի խորհրդի անդամ եղբարմէյստեր Ն. Ֆ. Զունկովսկի յայտնեց Կով-

կասի քաղաքների միութեան լիազօրին այն մասին, որ ֆինանսների մինիստրը կարգադրել է, որ Վլադիկավկազ, Գրոզնի, Պեատիգօրսկ, Եկատերինոդար, Մայկոպ և Բօմանով քաղաքների բոլոր գինետները վերածվեն զինուորական հիւանդանոցների՝ վիրաւոր զօրականների համար։

◆ Վիրաւոր զինուորներին և պահեստիների ընտանիքներին օգնութիւն ցոյց տալու Թիֆլիսի նահանգի ազնուականների կոմիտէն իր վերջին նիստում որոշել է 50 մահճակալով մի հիւանդանոց բանալ, անկախ իշխ. Պ. Ի. Թումանովի ամարանոցի 50 մահճակալով հիւանդանոցից, որ գտնվում է Մցխէթի մօտ և որը ծառայելու է որպէս նոր ընակարան ապաքինվող զօրականների համար։ Այդ նիստում ցանկութիւն յայտնվեց Թիֆլիսի և Քութայիսի նահանգների ազնուականութեան գործունէութիւնը՝ պատերազմից վնասվածներին օգնելու վերաբերեալ՝ միացնել իրար։ Նիստին ներկայ գտնվող Քութայիսի նահանգի ազնուականութեան պարագլուխ իշխ. Դ. Օ. Նիջարաձէ յայտնեց, որ Քութայիսի ազնուականութեան սիրով կընդառաջի այդ ցանկութեան։

◆ Նահանգապետը թոյլատրել է Բարձրագոյն հաստատված ժողովրդական դասախօսութիւնների յանձնաժողովի անդամ Նիկ. Պոլուշկինին հոկտեմբերի 5-ին Կրուժօկի շէնքում մի դասախօսութիւն կարդալ, որի եկամուտը յատկացվելու է վիրաւոր և սպանված զօրականների ընտանիքների օգտին։

◆ Կովկասի քաղաքների միութեան լիազօր Ալ. Խատիսեան միջնորդել է Անդրկովկասի երկաթուղիների վարչութեան կառավարչի առաջ միութեան բիւրոյի 10 անդամին ձրի տոմսակ տալ երկաթուղիներով ճանապարհորդելու համար։

◆ Տեղական ադմինիստրացիան Պետրոգրադից մի առաջարկութիւն է ստացել—Գալիցիա ուղարկել ոստիկանական երկու պաշտօնեայ՝ մէկը քաղաքից, միւսը գաւառից։

◆ Ժողովրդական համալսարանների նախաձեռնութեամբ Ժողովրդական Տանը Կոզլով կարդալու է մի դասախօսութիւն «Սերբիան և Զերնոգորիան» թեմայով։ Դասախօսութիւնը լինելու է ռուսերէն։

◆ Ժողովրդական համալսարանի ընկերութեան անդամների ընդհանուր ժողովը տեղի է ունենալու ոչ հոկտեմբերի 5-ին, այլ հոկտեմբերի 12-ին, որի մասին իր ժամանակին կը յայտարարվի։

◆ Վրաց հասարակութեան մէջ միտք է յղացել վրաց նոր թատրոնը շինել եղբ. Զուբալաշվիլների հողամասի վրա, որը գտնվում է Ինժենիերնայա փողոցի աջ կողմը, «Լօնդոն» հիւրանոցի շարքում։ Այդ առիթով դիմում է արված եղբ. Զուբալաշվիլներին յիշեալ հողամասը ծախել ձեռնտու պայմաններով։

—

ԿՈՎԿԱՍ

◆ «Зак. Рѣчь» թերթը հրաւիրում է ուշադրութիւն ում անկ է Մանգլիսի հայոց և ռուսաց գերեզմանատների վիճակի վրա, որոնք, լրագրի ասելով, աղբակոյտերի են վերածված և պահպանվում են մեծ անմաքրութեան մէջ։ Այդ լուրի առիթով մեր խմբագրութեան ներկայացան երկու տեղացի հայեր, որոնք, հաստատելով լուրի ճշդութիւնը, խնդրեցին մեզ հրաւիրել հայոց հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը։ Առիթից օգուտ ենք քաղում արձանագրել և այն տխուր փաստը, որ թէ Մանգլիսում և թէ նրա մօտակայ Թօնէտ գիւղում, ուր հայ ժողովուրդը վրացախօս է, չը կայ հայոց ծխական դպրոց։ Եւ սակայն այդ վայրերը այսպէս ասած հայոց առաջնորդի քթի տակն են...։

◆ Պ. Նիկ. Սաթունեան եկատերինոդարից հեռագրում է մեզ. «Հիւանդութիւնից յետոյ վախճանվեց Զաքարեանց քահանան։ Թաղումը հոկտ. 5-ին»։

—

ՌՈՒՍԱՍՏԱՆ

◆ Ներկայ պատերազմի պատճառով Աստրախանի ձկնարդիւնաբերողների մօտ կուտակվել է 40,000 պուդ խաւեար, որ անկարելի է ներկայանում արտահանել։ Պետրոգրադում այդ առիթով տեղի են ունենում խորհրդակցութիւններ, ի նկատի ունենալով ձկնարդիւնաբերողների ստացած խոշոր վնասները։

◆ Ներքին գործերի մինիստրութիւնը վերաքննում է օտարերկրացիներին ռուսահպատակութեան ընդունելու կանոնները աւելի սահմանափակ սահմաններում։

◆ Կիէվի գեներալ-նահանգապետութիւնը նախագծված է վերացնել։

◆ Պետրոգրադում անձնասպան է եղել միլիոնատիրոջ կին Ելիսէևան։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տուն

Ժամանակի տրամադրութեան համապատասխան, Ժողովրդական Տան ռուսաց դրամատիկական խմբակը հոկտ. 2-ին կազմակերպել էր երկրորդ հայրենասիրական ներկայացումը։

Սկզբում ներկայացվեց «Զինադադար» 1 գործ. դրամա-էսքիզը, յետոյ «M-elle Ֆիֆի» 1 գործ. դրաման, որոնց նիւթը, ինչպէս յայտնի է, առնված է ֆրանս-պրուսական պատերազմի օրերից։

Երրորդը խաղացվեց Պիսէմսկիի «Վեսերանը և Նորակոչը» 1 գործ. դրաման, որ հաճելի տպաւորութիւն թողեց թէ գեղեցիկ հիւսածքով և թէ սիրողների համար շահեկան խաղով։

Ցիշեալ երեք պիէսներում հանդէս եկան դերասաններ Բէրքանով և Շումսկի, նաև Օսիպով, Իրանսկի կարող սիրողայժերը։

Վերջում տեղի ունեցաւ ապօթէօզ «Մեծ է ռուս երկրի Աստուածը» նշանաբանով։ Բեմի վրա աջող կերպով պատկերացվեցին Ռուսաստանի համարեա բոլոր ազգերի տիպերը, որոնց հավանաւորում է ռուսական երկգլխանի արծիւը։ Ահա նուագվեց ռուսական ազգային օրհներգը, որի ժամանակ բեմ ելաւ ռուսաց զինուորը ազգային երեք գոյնի դրօշակը ձեռքին պարված։ Թատրոնը լցրած հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ և յոտնկայս պահանջում է նուագել օրհներգը երեք անգամ...

Այնուհետև նուագվում է ֆրանսիական ազգային հիմնը՝ մարսէլիէզը, և բեմ է ելնում Ֆրանսիացի զինուորը իր դրօշակով։ Եւ այդպէս հեռագեռ երևում են ամեն անգամ ազգային օրհներգի երաժշտութեամբ և ազգային դրօշակը ձեռքերին՝ անգլիացի, սերբ, բելգիացի, եապոնացի և չերնոգորցի զինուորները։ Թատրոնը ամեն ազգի հիմնից յետոյ դղրդում է ուժեղ ծափահարութիւնից։ Առանձնապէս բուռն խանդավառութիւն առաջ բերեց կարմիր բելգիացի զինուորի—ներկայ եւրօպական պատերազմի այդ անմեղ նահատակի—երևալը, որ ընդունվեց խրոխտ ովացիաներով ի պատիւ Բելգիայի։

Ընդհանուր առմամբ ներկայացումը և ապօթէօզը թողին իրանց ցանկալի ազդեցութիւնը։

Հետևեալ հայրենասիրական ներկայացումը Ժողովրդական Տանը աւելի ընդարձակ ծրագրով կազմակերպում է տիկ. Նիկոնովան հոկտեմբերի 6-ին։ Ե.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Հայաստան եւ հարեւան երկրամասեր. կազմեց Ա. Աբեղեան, Թիֆլիս, 1914 թ., գինը 80 կ.։

Հայաստանի աշխարհագրութիւնը, որպէս առարկայ, մեր դպրոցներում մինչև այժմ անցել են գլխաւորապէս հիմք ունենալով այդ երկրի պատմական աշխարհագրութիւնը։ Բացի այդ՝ առարկան դասաւանդողները, ձեռքի տակ չունենալով մի ըստ ամենայնի օժանդակ դասագիրք, ստիպված են եղել անցնել տետրակներով, որ մեծ անյարմարութիւններ էր ստեղծում թէ ուսուցչի և թէ աշակերտների համար։

Դասագրքի պակասութիւնը զգացվել է շատ վաղուց։ Եւ այս տարի միայն իրար ետևից լոյս տեսան երկու դասագրքեր՝ մէկը Ա. Տէր-Յակոբեանի*) և միւսը՝ Ա. Աբեղեանի աշխատասիրութեամբ։

Լոյս ընծայելով Հայաստանի աշխարհագրութեան այս դասագիրքը, Աբեղեանը նպատակ է ունեցել լրացնել իր հրատարակած ընդհանուր աշխարհագրութեան միւս դասագրքերի շարքը։ Հայաստանի աշխարհագրութիւնը կազմելիս, հեղինակը իբրև հիմք ընդունել է նոր աշխարհագրութիւնը, հին պատմական բաժանումների մասին տալով անհրաժեշտ տեղեկութիւններ և ընդհանրապէս օգտվել է այնպիսի պատկառելի աղբիւրներից, որպիսիք են Լինչի, Ռեկլիւսի, Քինէի և այլն աշխատութիւնները։ առանձին գլուխների համար դիմել է աւելի նոր բագոյն ուսումնասիրութիւնների, որպիսիք են Ալ. Քալանթարենը ժամանակակից կովկասահայութեան վերաբերեալ, իսկ Զէյթունցուները և Ա-Դօինը՝ Թիւրքահայաստանի։

Դասագիրքը պարունակում իր մէջ բազմաթիւ նկարներ և մի քանի գունատիպ ու սև քարտէզներ։ Լեզուն մատչելի է, գինը համեմատաբար թանդ է հայ աշակերտութեան համար։ Գումարով գնողների համար նշանակված 60 կոպէկը միանգամայն բաւական գին պէտք է համարվէր բոլոր գնողների համար էլ։ Ուսուցիչ

*) Սրա մասին զրախօսվել է «Մշակում»։

ՄԱՄՈՒԼ

Տեղական «Кавказъ» թերթը խօսելով Էջմիածնի ճեմարանի 40-ամեակի մասին, արտայայտում է գրեթէ նոյն մտքերը, ինչ որ յայտնեցինք մենք «Մշակի» մէջ։ Նա գրում է.

Պատերազմը ետ է մղել բոլոր մնացած շահեկանութիւնները։ Զարմանալի չէ ուրեմն, որ նոյն իսկ այնպիսի համեմատաբար խոշոր մի դէպք հայկական կեանքի մէջ, ինչպէս Էջմիածնի Գէորգեան ճեմարանի 40-ամեակի լրումը, մնաց գրեթէ աննկատելի։ Դա հայերի մէջ միակ բարձր կրթական հաստատութիւնն է, որ 1874 թ. հիմնվեց Գէորգ IV կաթողիկոսի ձեռքով։ Այդ քահանայապետը, որ միշտ հովանաւորում էր գիտութիւնները և լուսաւորութիւնը, կարողացաւ իրագործել այն, ինչի մասին որ երազում էին նրա նախորդները՝ Մատթէոս I և Ներսէս V, և ստեղծեց այժմ իր անունը կրող ճեմարանը, որի կոչումը նա տեսնում էր ազգային դպրոցների համար մանկավարժներ պատրաստելու և, մանաւանդ, կրթված քահանաներ արտադրելու մէջ։ Իր սիրելի զաւակի համար Գէորգ IV կաթողիկոսը չէր խնայում ոչ հոգեղ, ոչ միջոց։ Նրա արժանաւոր օգնականն տեսուչ Գաբրիէլ եպիսկոպոս Այվազովսկի (նշանաւոր ծովանկարչի եղբայրը) իր գիտութեամբ և փորձառութեամբ շատ նպաստեց այն բանին, որ ճեմարանը արդարացրեց այն յոյսերը, որ ունէին նրա վրա նրա հիմնադիրը և հայ ժողովուրդը։ Դրանից յետոյ քիչ դառն ու ծանր բոպէներ չը վիճակվեց նորակառոյց դպրոցին։ Էջմիածնի ամեն տեսակ գործելակերպի փոփոխութիւնը ամենից առաջ անդրադառնում էր ճեմարանի վրա։ Նը-բան կառավարում էին մէկ պահպանողականները, մէկ ազատամիտները, երբեմն անդամ այն մարդիկ, որոնք իրանց ձախ էին անանում։ Այդ ամեն փոփոխութիւնը դեռ ևս չը հիմնաւորված դպրոցի վրա անդրադառնում էին կործանարար կերպով։ Աշակերտութեան մէջ տեղի ունեցող անկարգութիւնները, բարձր դասարանների աշակերտների սանձարձակութիւնը, որ քանիցս առիթ է տուել նրանց հեռացնելուն, նիւթական դժուարութիւնները,—այս բոլորը ստիպել է երկիւղ կրել ճեմարանի ճակատագրի համար։ Սակայն երբեմն նա յանկարծ «հաւաքում էր իրան» և նախկին տեսքն էր ընդունում։ Այդ բաղաւոր շրջաններից մէկում, ճեմարանը արտադրեց տասնեակ վարդապետների, որոնք յետոյ իրանց կրթութիւնը շարունակեցին ռուսական և արտասահմանեան համալսարաններում և օրանք այժմ հայ եկեղեցու զարդն են կազմում։

Վերջին տարիներս առանձնապէս շատ յաճախ էին փոխվում ճեմարանի ղեկավարները։ Մալխասեանցի տեսուչ նշանակելովը, պէտք է յուսալ, որ ճեմարանը այդ պաշտօնի համար համապատասխան անձնաւորութիւն է ձեռք բերել, և նրա կեանքը մտնելու է կանոնաւոր զարգացման ուղին։

*

Վրաց «Կոչէ» (Ծայռ) շաբաթաթերթի № 27-ի առաջնորդող ընդարձակ յօդուածը նուիրված է պատերազմին, նրա մեծ և փոքր ազգերի համար ունեցած նշանակութեան և ազդեցութեան, այլև այդ ազգերի դէպի պատերազմը ցոյց տուած համակրական վերաբերմունքին։ Վերջում մասնաւորելով խօսքը վրաց ազգի վերաբերմամբ, յօդուածագիրը ցանկութիւն է յայտնում, որ վրացիները, եթէ ուզում են պահպանել ազգային ինքնուրոյնութիւնը և ազգային կուլտուրայի հարատութիւնը, պէտք է վերջ տան կոչումային, դասակարգային, կուսակցական և խմբակցական ամեն մի անբաւականութեան և լինեն մի ամբողջութիւն, որի օրինակը տալիս են ոչ միայն մեծ և փոքր տէրութիւնների միութիւնները ու ազգերը, այլ և մեր հարևանները ևս։

Ճիշդ է,—ասում է «Կոչէն»,—դժբաղդաբար մենք չունենք թէկուզ հէնց այնպիսի գլխաւոր, ինչպիսին է հայերի կաթողիկոսը, որը կարող լիներ խօսել ամբողջ ազգի անունով, սակայն մենք ունենք մամուլ, որը պարտաւոր է լինել Վրաստանի հոգու և սրտի ցանկութեան արտայայտիչը, իսկ այսօրվայ Վրաստանի սրտի ցանկութիւնը կայանում է նրանում, որ պահպանի իր ազգային, կուլտուրական ինքնուրոյնութիւնը ազգային տէրրիտորիայի վրա։

*

Նոյն «Կոչէն» «Зак. Рѣчь»-ից արատապելով Շերվանզադէի՝ «Մշակի» 209 №-ում լոյս ընծայած յօդուածի թարգմանութիւնը՝ իր կողմից աւելացնում է.

Թիւրքիայում ինքնավարութիւն պահանջելու մասին մենք բացի մեր հաւանութիւնը և համակրանքը յայտնելուց ուրիշ ասելիք չունենք, սակայն Ասիայում քաղաքակրթական դեր խաղալը հայ ազգի կողմից և այն էլ միմիայն հայ ազգին վերագրել-սեփականացնելը մենք համարում ենք ինքնասիրութեան անհիմն պարծանք։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բաց նամակ «Արփիի» խմբագրութեան

Սպահան, 14 սեպտեմբերի

Տարին վերջանում է, և, հակառակ ձեր՝ մամուլի մէջ յայտարարած խոստումներին, դեռ «Արփիի» ոչ մի № կամ յաւելուած ձեր կողմից ես չեմ ստացել, մինչդեռ դուք ինձանից 5 ր. իբրև արտասահմանի մէկ տարվայ բաժանորդագին ստացել էք վաղուց։ «Արփին», ըստ ձեր յայտարարութեան, մինչև № 14-ը լոյս է տեսել, բայց ինձ ոչ մի համար չուղարկեցիք և ուրիշ ոչ մի յաւելուածի երես էլ չը տեսայ։ Յովհ. Բարսեղեան

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիս, 3 հոկտեմբերի

Կ. Հ. Բ. Ընկ. «Հայկական Հիւանդանոցում» վիրաւոր զինուորների համար, յանձն են առել ծախսերը Թիֆլիսի կանանց երկրորդ խումբը (առաջին խումբը յանձն է առել 10 հոգու ծախսը) մի մահճակալի, Իսահակ Կարապետովիչ Վարդանեանը 3 մահճակալի, մի մահճակալի կահաւորման ծախսը յանձն է առել Ե. Պ. Կրասիլնիկեանը։ Ստացվել են նաև հետևեալ նուիրատուութիւնները. պ. Վաս. Գրիգ. և տիկ. Ա. Գրիգ. Շանլեանների 34½ արշին մագաղալամ, 68¾ արշին կրիչեօնկա, տ. Ա. Ա. Թառումեանից 4 բմբուլէ բալիշներ, ա./տ. Ի. Դ. Ռօտինովից 10 դիւժին ձեռքի թաշկինակ, 94½ արշին լանկօրտ, ա./տ. Տէր-Գասպարեանից երկու հեռախօսի ապարատ, Հայ Դրամատիկ Խմբից մինչև պատերազմի վերջը ամեն ամիս 29 ր. 70 կ., տ. Սօֆիա Փանեանից մինչև պատերազմի վերջը ամսական 5 ր., տ. Ա. Ա. Գէորգեանից մինչև պատերազմի վերջը ամսական 5 բուբլի։ Խորհուրդ

ՖԷԼԻԷՏՕՆ

ԳԵՐԲՆԱԿԱՆ ՄԵԾ ՏԵՒՏՕՆԸ

(«Ներկարարի» անտիպ յիշատակարանից»)

Փորձ է սա կենսագրական, թէ մի քննութիւն ուսումնասիրական, ինքս էլ չը գիտեմ։

Ներկարար

Գլ. Ա.

Տեսօնը, ասում են, մարդ է եղել։
Կայէնն էլ է եղել մարդ։
Որովհետև մարդ կայ Կայէն,
Մարդ կայ Յուդայ։
Եւ որովհետև Ներսոն, Կարմիր-Համիդ հրէշներն էլ են մարդիկ համարվել,
Ուստի, ասում են, վիրաւորական չի լինի, եթէ տեսօն Վիլհելմ կայզէրին ևս անուանենք գերբնական մեծ մարդ։
Ինչ կարծիք, որ կայզէրը գերբնական Ներսոնից և Կարմիր-Համիդից աւելի, և այն էլ շատ աւելի իրաւունք ունի մեծ մարդ կոչվելու։
Ցայսմի դրող Հաւատման դեռ նրան մեծ քաղաքակրթչի անունն էլ է ընծայում։
Ուրեմն անհաւատալի չէ, երբ կայզէրը իրան Աստուծոյ առաքեալ է հրատարակում։
Այսպէս, ուրեմն, այլ ևս կասկածի չէ ենթարկվում, որ վերոյիշեալ մարդկանց շարքում գերբնական մեծ տեսօնը մեծ էլ մարդ է։
Բայց իրաւ այդպէս է։
— Ես մարդ եմ եւ... խելօք մարդ։
Մի քանի ամիս առաջ այսպէս սկսեց մի երիտասարդ ֆուտուրիստ իր դասախօսութիւնը։
Եւ ապա, նայելով ժպտացող հանդիսականներին, աւելացրեց.
— Այո, ծիծաղելու ոչինչ չը կայ. ես մարդ եմ, որովհետև իմ կուրծքը զարդարող ձեր սիրած վարդը չէ գարշահոտ, այլ, ինչպէս տեսնում էք,—բողկն է անհոտ... Ես խելօք եմ, որովհետև հասարակ մարդկանցից աւելի բարձր եմ գնահատում միտքս, թարմ, նոր միտքս...
Աչ հաւանես, որ աչքերը չուած լսում էր, ուսերը վեր քաշեց և, դառնալով իր հարեւանին, ասաց.
— Ուրեմն, սրա ասելով, հին մարդկանները աւելի խելօք մարդիկ պէտք է համարվեն։
— Էլ ինչու հին, այժմեան հայակը Համիդը երկար տարիներ խելօք Եւրօպային իր մատների վրա չէր խաղացնում։
— Դէ նա լեշակեր գազան էր...
— Այդ մենք էինք ասում, իսկ մեծ Եւրօպայում նրան մեծ դիպլոմատների շարքումն էին դասում,—ասաց նրան հարևանը։
Խեղճ հարևանս չը գիտէր, որ մարդկանց մէջ լինում են և խոտաճարակներ, և մսակերներ, և յօշոտող լեշակերներ։
Չը գիտէր, որ լեշակերութիւնը մարդկային բարձր արժանաւորութիւններից մէկն է, որ համիդականութիւնը միայն Կարմիր Համիդին վերագրելը մեծ վիրաւորանք է տեսօնութեանը, որ մեծ մարդասպանը գերբնական մեծ քաղաքակրթիչ կայզերի կօշիկներին էլ չէ արժանի...
Եւ ծրտեղից կարող էր նա այդ գիտենալ, երբ այսօրվայ ոչ պատերազմը կար և ոչ էլ յայտնի Հաւատման բացատրութիւնը։
Եթէ ամբողջ Եւրօպան մարդը մարդից զանազանել չը գիտէր, մի խեղճ ասիացի Համօ ծրտեղից գիտենար։

Իսրայել Յօշամիր

Խմբագիր-հրատարակիչ՝
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բժշկ. Բ. Նաւասարդեանի
Հիմնված 1880 թ.
(Գուկիա, Զօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
«606»-ի եւ «914»-ի ներսքսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ առ. 11—12 ժ.
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վիներական (սիֆիլիս) հիւանդութիւն։
Բ. Դ. ԱԶԱՍԱՐԲԵԱՆ—9½—2 ժ. ներքին, ջղային և երեխայոց հիւանդութ. և ծաղկատամ.։
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—11—12 ժ. ականջի, կոկորդի, քթի հիւանդութ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. երեշ. հինգշ. և շաբաթ. երեխայոց ներքին և հիւ. և ծաղկատամ.։
ԿԻՆ-Բ. ԺԻԶՅ ՅԷՐ-ԴԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Մ. Մ. ԲԵՆԻԱՄՕՎԻՉ—6—7 ժ.
Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
1. 0—88

Ատամնաբուժարան
Հիմնված ատամնաբոյժ
Բ. ՀԱՅԿԻՆԱՅԻ
Նախաձեռնութեամբ՝ Թիֆլիս, Միխայլովսկի պր. № 76
Բուժարանը բաց է հիւանդների համար օրվայ ու գիշերվայ ամեն ժամին։ Ատամները բուժելու և պլոմբելու համար վճարը ստացվում է ըստ հաստատված ոսկեզնի։
Բուժարանում գործում են 5 բժիշկ-մասնագէտներ, բժ. վիրաբոյժ Բ. Բ. Պիրադովը (որ ժամանակաւորապէս բացակայ է)։
Բուժարանն ունի կատարելագործված լաբորատորիա արհեստական ատամներ պատրաստելու համար։ Կատարվում են ամեն տեսակ ատամ նա-տեխնիկական աշխատանքներ և շտապ վերանորոգումներ 3 ժամվայ ընթացքում։
(օ. մ.) 755. 100—26

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ
Սուխումի շրջանի մի քանի դպրոցների համար հարկաւոր են
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ և ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ
Անյապաղ դիմել հետևեալ հասէով՝
2—1 916. Сухумъ—«Прометей».

Հայրապետական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
(ա.օ) Նիկոլայէվսկայա փող. 36. 863. 25—30

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրէնութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելեֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն ուսարտողներին տրվում են ատտեստատներ։
Դասընթացքն զբաղվում են կատարվում Լօնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձեւով կազմակերպված Muster-Comptoir-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թուաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թուաբանութիւն համրիչի վրա. 7) Գայիչագրութիւն (ամենավաղ ձեռքի ուղղագրութիւն), արագագրութիւն. բ.) ոչ-պարտադիր. 1) Ossur լեզուներ. 2) Տոպագրութիւն. 3) Դակտիլոգրաֆիա (բեմինգտոն և ուր.) և 4) Առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և գաս-դաս։ Ունկնդիրների թիւն շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարազգացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. ժամը 10—12-ը և երեկ. 4—7-ը։ Ծրագիրը և կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։ Կուրսերը ֆիրմաներին յանձնարարում են հաշ.տապահներ, օգնականներ և առևտ. այլ ծառայողներ՝ կուրսերի ընթացաւարտներից և իրանց ընդունակութեամբ աչքի ընկնողներից։ (Ընթացիկ տարում կուրսերն ունեցել են 334 ունկնդիր, որոնցից 67 հոգի իգական սեռից)։
Կուրսերի հիմնադիր՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ա. օ.) 720. 0—46

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրոշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՁԱՆԱՁԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՊՐԷՑՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный